«Դատակարգային կուի ցուցանողութեանը բռնուած այս մարդկանց յեղափոխական ֆրոնտները, որոնք փրփուրից էին

շինուած, ոչ այլ ինչ էին, բայց եթէ մի պատեան՝ պարփակելու Համար ինկնդներին (պրուսական արեւական) և ոստիկանութեան ձեքենալութիւնների փոտած միջուրը:

«Գեր-յեղափոխական» կեղծ սոցիալիզմը, որ միայն «կոշտացած ձեռքերին» է կոչ ոնում, մեր յետադիմականների Համար երկու առաւելութիւն է ներկայացնում. առաջին՝ նա սոցիալիստական Հարմուրը սահմանափակում է մի դատակարգով, որ Գերմանիայում Հաստ փոքրիկ է յեղափոխութիւն գլուխ բերելու Համար, և երկրորդ՝ Հրաշալի կերպով վախեցնում է կիսատատարբեր ժողովրդական զանգուածներին — զլիստարապէս գիւղացիութեանն ու մանր բուրժուակալային, որոնք դեռ ևս ինքնուրույն քաղաքական նախաձեռնութեանն ու գործունէութեան չեն Հասել:

«Ինքն չպէտք է Հարցնենք — դու վարձու բանտը ես եթէ ոչ, այլ մեր Հարցը պէտք է լինի. դու սոցիալիզմով ես ես:

«Վարձու բանտներով սահմանափակելով՝ Սոցիալ-Դեմոկրատիան անդոր կլինի յաղթանակելու, իսկ եթէ նա ընդգրկից ամբողջ աշխատաւոր ժողովուրդը և ազդի աչկադոյն գաւակներին՝ արդէն յաղթանակու է:

«Ինչո՞ւ պէտք է մենք ույժ Հանդուրեմնք մեր ընկերների Հայրաձեռններին: Ինչո՞ւ են մեզ ենթարկում անենալով — դովեցուցիչ անարգանքներին: *)

«Ռրովհետև մենք դեռ ևս թոյլ ենք:

«Եւ ինչո՞ւ ենք թոյլ:

«Ռրովհետև ժողովրդի մի փոքրիկ մասնիկն է ընդունում սոցիալիզմով արտատակն ուսմունքը:

«Եւ այս Հանգամանքներում մենք, որ շատ ենք թոյլ, պէտք է մեր թուլութիւնն աւելի՛ ևս մեծացնենք՝ Հազարաւոր մարդկանց մեղմից վանելով, սրովհետև նրանք պատահար իբրև մի որոշ Հասարակական խմբակցութեան անդամներ չեն՝ աշխարհ կկուլ: Այսպիսի յիմարութիւնը Հաստարար է կուսակցական գաւաճանութեան:

«Մեր նշանարձեւը պէտք է լինի ոչ թէ սահմանափակել, այլ տարածել Սոցիալ-Դեմոկրատիայի շրջանակը պէտք է աւելի ու աւելի ընդարձակել մինչև որ մենք մեր այսօրու թշուառների մեծամասնութիւնը կա՞մ մեր բարեկամներն ու ընկերները դարձնենք, կա՞մ գոնէ գիտութիւն անենք»:

Նոյն յօդուածի մի որովք զլիստմ Լիբկեխար աւելի՛ ևս մեծ վնասակարութեամբ ասում է.

«Նա (այսինքն Սոցիալ-Դեմոկրատիան) անբողջ ժողովրդի կուսակցութիւնն է, բացառութեամբ մի երկու հարիւր հազար իտալեացի կալաւածատերի, իւնկեցեցեթի, բուրժուաների և կլիեականներին»:

Մարքսիզմի աւսակետից ուղղակի Հերետիկոսական այս տեսակէտները զգրախաւարք միայն Լիբկեխարի մեղմ մնացնելու Սոց. Դեմոկրատիայի յետագայ դարգացումը Հիմնովին յեղաշրջից այն դրութիւնը, որ ներկայացնում է մեզ վե-

*) ժամօր: Այս սոցիալիզմը գրած միջոցին Գերմանիայում Սոցիալ-Դեմոկրատիայի դէմ բացաւելի օրէնք էր Հրատարակւած, որով այդ կուսակցութիւնը, իբրև ոչ օրինական կազմակերպութիւն, բաղձապիսի Հետապնդումների էր ենթարկուած:

բոլիշեակ յօդածը: 1881 թ.ին «չընչին փոքրամասնութիւն» կազմող հոսանքը, որին Լիբկնիխսը ոչ միայն ճարտում էր, այլ ևս օտարկանութեան ու ինկնեղների անդրակից գործիք հռչակած՝ տաւը տարի լետոյ, իր անակէաները պարտադրեց ամբողջ կուսակցութեանը՝ տալով նրա ձեռքը մի ծրագիր, ըստ որի միայն ֆիզիքայակ աշխատող վարձու բանուորութիւնն է հանդիսանում սոցիալիզմի ընկերային հիմքը (բազը) հետևաբար և սոցիալիստական կուսակցութեան բանակը:

Սակայն ինչպէս արդիւնաբերութեան կենդրոնացման, կամ ձանր անտեսութիւնների կշիռացման ինչդրում, նոյնպէս և բանուորացման ինչդրում, Հատ շուտով՝ վերսկսեցին քննադատութիւնները Սոցիալ-Դեմոկրատիայի մէջ: Դրա պատճառն այն չէ միայն, որ այս երկու ինչդիրները օրգանապէս շաղկապած են իրար հետ, այլ և այն, որ 1891 թ.ից լետոյ էլ «ձանր՝ բուրժուական» տարբեր վերևում յիշած պատճառներով, շարունակ ձեռնու էին կուսակցութեան դռները: Եւ ս՛ք միայն ձեռնու, այլ և ներս մտնում: Որովհետև երկ կուսակցութեան ծրագիրը տեսական նկատումներով, իր գիտողութեան շրջանակից դուրս է նետում այդ տարբերի՛ն՝ կուսակցութեան քաղաքականութիւնը, գործնական նկատումներով, իրա մեծ կարիք է դրում նրանց աջակցութեանը: Թէ այս գործնական նկատումները ի՛նչ աստիճանի գերակշռութիւն են ստացել՝ գերմանական Սոցիալ-Դեմոկրատիայի մէջ դա կարիքի է կուահել այն փաստից, որ կուսակցութեան նշանակող տեսարաններից մէկը, 2. Կոնուով, մի բանի տարի առաջ «Die Neue Zeit» պաշտօնաթերթի մէջ՝ կուսակցութեան բաժանելը երկու մասի բացատրում էր նրանով, թէ աջակողմեան թիւում (Մեծամասնութեան կուսակցութիւն) ձանր բուժուական տարբերն են գերակշռում, իսկ ձախակողմեան թիւում (Սնկախ Ընկերվարական կուսակցութիւն) վարձու բանուորութիւնը:

Այս քննադատութիւնների մէջ չենք ուզում մանկ, որովհետև նրանք ընդհանուր առմամբ կրկնութիւն են հանդիսանում արդիւնաբերութեան կինորոնացման շուրջը տեղի ունեցած վեճերի, որոնց վրայ հանգամանօրէն կանգ ենք առնել նախորդ գլխում: Լաճաւուտակի յիշատակենք միայն, որ նրանց հարաւանների տակ բանուորացման տեսութիւնը աւելի՛ ևս վատ վիճակի ենթարկեց, քան թէ արդիւնաբերութեան կենտրոնացումը: 1922ին նրա հակառակորդները Գէօրլիցում, 30 տարով յետ թուջլով էրֆուրտի Մրագրի վրայից՝ պաշտօնական ձեւակերպութիւն օսին այն անակէաներին, որ պաշտպանում էր Լիբկնիխսը 1881-ին: Գէօրլիցի ծրագրում ձեռք կարում ենք:

«Գերմանական Սոցիալ-Դեմոկրատիան աւխաւաւուր ժողովրդի կուսակցութիւնն է բազաւում և զրգում: Նա ձգտում է ի մի համախմբել բոլոր ձեռքի և ձոքի աշխատատարներին, որոնք անփական վատակող են ապրում, օրպէսզի նրանք ընդհանուր իմացութեամբ և նպատակներով, միասնաբար պայքար մղեն ժողովրդասէտութեան և սոցիալիզմի համար:

Այս յեղաշրջումը կատարում է ոչ միայն Լիբկնիխսի ձառնանշած գործնական նկատումներով, որանք կարող են

անհեռին էլ պարտադիր չլինել մի ուղղափառ ճարտիտար համար, այլ և այն իմիմնական պատճառով, որ անտեսական կենսիցի զարգացումը, ինչպէս արդիւնաբերութեան կենտրոնացման, նոյնպէս և ժողովրդական զանգաւանների բանուորացման խնդրում, անհեռին այն ազդութեամբ և այն տեւպով չի գնում, ինչ որ նախադեւած է «Պոմուրիստական Մանիֆէստ»-ի և էրֆուրտի Մրագրի մէջ: Այս մասին անհրաժեշտ բացատրութիւնների մէջ մանկուց առաջ՝ տեսնենք թէ ի՛նչ են ստուճ 1882ի և 1907ի վիճակագրութիւնները ժողովրդական ստորին և միջին խւերի շերտաւորման խընդրում:

Ա. Վարձու բանուորներ.

Տեստագործութեան երեք հիմնական ճիւղերի մէջ ֆիզիքական աշխատանք կատարող վարձու բանուորութեան աճումը այդ 25 տարայ մէջ արտայայտում է հետեւեալ հաւաքեւակներով.

Տեստագործութիւն	1882	1907	Յաւելում թւով	Յաւելում % ով
Գիւղատեստութ.	5882	7283	1401	24 %
Ճարտարարեստ	4096	8593	4497	110 %
Սաւաւուր	727	1960	1233	170 %
Ընդհանուր թիւ	10705	17836	7131	67 %

Բ. Մաւալուցներ

Այս խօսքի տակ հասկացում են անտեսագործութեան մէջ ամաւվարձով աշխատող ճարտարագետները, բիմիկաւները, միքննագէտները, գործ վատարները, հաշւապահները և այս կարգի մտաւոր աշխատաւորները. Սրանց համապատասխան թւերն են.

Տեստագործութիւն	1882	1907	Յաւելում թւով	Յաւելում % ով
Գիւղատեստութ.	66644	98812	32168	48 %
Ճարտարարհեստ	99076	686007	586931	592 %
Սաւաւուր	141548	505909	364361	258 %
Ընդհանուր թիւ	307268	1290728	983460	320 %

Գ. Ինճուրայներ

Այս բաժնի մէջ են մտնում ձանր գիւղացիները, արհեստաւորները, խանութպանները, պետական կամ հանրային պաշտօնեաները և այն մաքի աշխատաւորները (բիշիւ, փաստարան, գրող, լրագրող են) որոնք թէև վարձու չեն, բայց ուրիշ աշխատանք չեն շահագործում: Ըստ Կաուցիու՝ այս խւերի գործունակները 1882ին եղել են 5,191,000 հոգի, իսկ 1907ին 5,490,000. Ասել է թէ, 25 տարայ ընթացքում օրանց թիւն անկ է 299,000. ով կամ 5,8 % ուով:

*) K. Kautsky: «Die Proletarische Revolution», էջ 33.

Եթէ նկատի ունենանք, որ Գերմանիայի ընտելութեան թիւը վերոյիշեալ 25 տարւոյ ընթացքում 45,220,000-ից բարձրացել է 61,720,000-ի, այսինքն աճել է մօտ 36% և այս սովորական աճումը զիջուհեք այն ստիւտներին, որոնք ցոյց են տալիս վրէն առաջ երբևէ երբեք խաւերի ընդհատումը աճումը, ապա կտանանք որ Եւրոպիոյ մեծագոյն զարգացումը, վարձու բանւորութիւնը աճել է ոչ աւելի քան 31%, ծառայողներ խաւը աճել է 284%, և ինքնուրոյններ թիւը նազել է 30,2%:

Իսկ եթէ ծառայողներին և ինքնուրոյններին Համարենք միջին խաւ, ինչպէս նրանք Համարել են մինչև Հիմայ՝ կտանանք, որ 1882-1907-ին նրանց ընդհանուր թիւը 5,498 000-ից բարձրացել է 6,782,000-ի, ուրիշ խօսքով աճել է 1,282,000-ով կամ 23%: Չեղբիով վերջին թւից ընտելութեան աճման ստիւտը (36%) կտանանք, որ վերոյիշեալ 25 տարւոյ ընթացքում միջին խաւերը նազել են միմիայն 13%:

Այսպիսով, վերջին Հաշւով տեսնում ենք, որ 1882-1907-ին, երբ գերմանական կապիտալիզմը իր յաղթական վերելքի օրերն է ապրում, վարձու բանւորութիւնը Գերմանիայում աճում է Հազիւ 31%, իսկ միջին խաւերը նազում են 13%: Սա ցոյց է տալիս, որ ժողովրդական զանգաձնների բանւորացումը շատ աւելի զանազակ ընթացք ունի, քան կարծում էին Մարքսն ու նրա աշակերտները: Դժբախտաբար 1907-ից ի վեր այդ երկրում տնտեսագործութեան վերաբերեալ վիճակագրութիւն չէ կատարել՝ այս զարգացման յետագայ ընթացքը թւական աւելանքով ներկայացնելու Համար: Սակայն բոլոր նշաններէց երևում է, որ ինչպէս մի շարք այլ կապիտալիստական երկրներում, նմանապէս և Գերմանիայում, բանւորացման պրօցէսը 1907-ից յետոյ աւելի՛ կ'ազանորդել է: Աստիճաբար, օրինակ, ինչպէս Արդիֆ Երբֆն է վկայում՝ «բազաբային բանւորութեան թիւը ազգաբնակչութեան ընդհանուր թւի Համեմատութեամբ այլևս չի աճում»: Նա մինչև անգամ կարծում է, թէ բանւորութեան թիւը «եւս պիտի իջնի»: *)

Այս երևույթը պատահական հանգամանք չէ կրօն, այլ քառական հիմնական Նա բացատրում է Հետևեալ պատճառներով:—

Ա. Կապիտալիստական տնտեսագործութիւնը զարգանում է երկու ներշնչ տնդեղնեղներով՝ նա մի կողմից Հետզհետէ ընդգրկանում է իր գործուկէտութեան շրջանակը՝ ժողովրդական տնտեսութեան բնաւոր ձիւղեր իր շահագործմանը ենթարկելով՝ որով և բանւորական ձեռքերի պահանջն է մեծանում, իսկ միւս կողմից՝ կապիտալիզմի պրօցէսը արդիւնաբերութեան միջոցները (մեքենայ, շարժիչ ուժ, գործի կենտրոնացում ևն) նաւորդում է այլ նոյն բանւորական ձեռքերի պահանջը: Այստեղ, ուր առաջ տանեակ և Հարիւրաւոր բանւորներ էին աշխատում Հին գործիքներով ու մեքենաներով մի որոշ գործ կատարելու Համար՝ այժմ շնորհիւ նա՛ր մեքենաների, նա՛ր շարժիչ ուժերի և աշխատանքի նա՛ր կազմակերպութեան, յաճախ մի Ծարտարագիտ և մի քանի մեքենագէտներ կամ որակեալ բանւորներ բաւական են Համարում Դոյն գործը և դեռ աւելին արտադրելու Համար: Սրանով է

բացատրւում, որ միայն Ծարտարագիտներն է՛նչ, Ծարտարապետները, քիմիկոսները և այլ տեխնիքական ուժերը քանակը 1882-1907-ին աճել է 592%, կամ, ընտելութեան աճման տուկոսի զեղշումով՝ 557%: Եթէ մտրդուային ուժը մեքենական ուժով փոխարինելու կամ աշխատանքի նպատակայարմար կազմակերպութեամբ կրճատելու Հնարաւորութիւնը չլիներ՝ այս 25 տարւոյ ընթացքում վարձու բանւորութիւնը պիտի աճէր ոչ թէ 31%, այլ կրկնակի եւսակի չափով, որպէսզի կարելի լինէր ապրանքների քանակը Հասցնել 1907 թիւ արտադրութեան աստիճանին:

Բ. Կապիտալիզմի առաջ երեք Հատարական շերտաւորումը, որ դիտարարեալն արտայայտւում է քաղաքային բանւորութեան աճմամբ ի Հաշիւ զիւղացիութեան, չի կարող անվերջ Հարուակելի՛ առանց Հարւած Հասցնելու ընդհանուր ժողովրդական տնտեսութեանը և Հեկց իրեն Ծարտարագիտին: Բանւորը աշխատելու Համար պիտի Հաց և այլ կենսական մթիւրքներ ունենայ: Գործարանները բանելու Համար, կարիք ունին բազմապիսի Հրօձ նիւթերի, որոնք դաշտից ու Հանդից են գալիս: Ո՛ր պէտք է Հայնայթէ այս մթիւրքներն ու նիւթերը, եթէ ոչ զիւղատնտեսութիւնը: Իսկ որովհետև վերջինս, ինչպէս տեսանք նախորդ դիւտում, ոչ միայն արամադրութիւն չէ ցոյց տալիս խաւը կապիտալիստական ձեւեր աճնելու, այլ, ընդհակառակը, Հետզհետէ աւելի ու աւելի զիւղացիական մասը տնտեսութեանը է վերածւում, ապա Հասկանալի է, որ զիւղացիութեան չափազանց նաւորումը պիտի տկարացնէր զիւղատնտեսութիւնը, Հետևաբար և մանրացնէր ձարտարագիտի և առհասարակ ժողովրդական տնտեսութեան վիճակը:

Ար զիւղացիական աշխատող ձեռքերի նաւորումը Գերմանիայում այս վտանգաւոր աստիճանին Հասել է արդէն, այդ երևում է կրնական մթիւրքների սակայն թանկութիւնից և գործարանների Համար անհրաժեշտ զիւղատնտեսական նիւթերի սուր կարիքից: Չարժեքից գործանելու, այսինքն զիւղատնտեսութեան և տնտեսագործութեան միւս ձիւղերի միջև անհրաժեշտ Հաւասարակշուրութիւնը վերականգնելու Համար, պէտք է ամենից առաջ զիւղատնտեսութիւնը աւաճոյնով աշխատող ձեռքերով: Այս զարմանումն է աՀա, որ կատարւում է ինքնաբերաբար և տնտեսական օրէնքների Հարկադրութեամբ: Կատարւում է նրանով՝ որ զիւղը նախկին չափերով աշխատող ձեռքերի աւելցում չէ տալիս բազաբային և, ընդհակառակը, քաղաքի անգործներից Հատերին զաւուճ է դէպի ինքը՝ նրանց Համար աշխատանք և բաւարար տուրուտ ապահովելով, — որով և բանւորացման պրօցէսը զգալիօրէն զանազան է:

Գ. Կապիտալիզմը չի կարողանում ս՛չ արդիւնագործութեան մէջ և ս՛չ էլ փոխանակութեան մէջ մի Հարւածով ու շրջացնել կամ վարձու բանւորներ զարձնել մանր գործարանատերերին, արհեստագործներին և խանութակներին: Սրանց կապիտալիստական մրցութիւնից նեղւելով Հանդիքի՛ իրենց ինքնուրոյն աշխատանքը զահպանելու Համար աւելի՛ դիմացկանութիւն են ցոյց տալիս, քան կարելի էր սպասել տնտեսական օրէնքի Սրա պատճառները բազմապիսի են: Նախ՝ կապիտալիստական ձեռնարկները միշտ չեն կարողանում բաւարարել շուկայի բոլոր կարիքները, որով և մանր արտադրող

*) Տես «Der Kampf» 1926 № 5

ներն ու փոխանակողներն այնտեղ կարողանում են աշխատանք գտնել իրենց համար: Այնուհետև՝ սպառողները անտեսական բարեկեցութեան մի որոշ աստիճանի հասնելուց յետոյ՝ միշտ չեն ղեկավարում անպատճառ աման զննելու հաշվով նրանց յաճախ անհատական նրբացած ճաշակի կամ զանազան յարմարութիւնների համար գերադասում են արհեստաւորի ձեռքի սուղ աշխատանքը՝ մեքենական աման արտադրութիւնից, և ճօտիկ խանութպանի ծառայութիւնը՝ հեռուար վաճառատան մատակարարութիւնից, — որով և մեծանում է նրանց մրցունակութիւնը: Վերջապէս՝ եթէ արհեստաւորներն ու խանութպանները իրենց մեքենաներով կամ դրամադրելով չեն կարող մրցել կապիտալիստների հետ, այնուամենայնիւ նրանք էլ կարողանում են որոշ չափով օգուտել ժամանակակից տեխնիքական և վարկային յարմարութիւններէց: Ինչ որ այստեղ պակաս է մնում՝ լրացւում է երկարատեւ, քրտնաշուն աշխատանքով որ նրանք գերադասում են վարձու բանւորի անազատ և անապահով վիճակից:

Այս բոլորին պիտի աւելացնել և այն, որ կապիտալիզմը յաճախ իրենց է զգում ինքնուրոյն արտադրողների և փոխանակողների թռչող արդիւնաբերական ձեռնարկները, իրենց զանազան պետքերը ձեռնուռ պայմաններով հոգալու համար երբեմն ոչ միայն գոյութիւն ունեցող արհեստաւորներին գործ են մատակարարում, այլ և առաջ են բերում բազմապիսի մանր արհեստանոցներ՝ ինքնուրոյն աշխատաւորներով՝ ինչպէս այդ տեսնում ենք, օրինակ, սուսնազործութեան մէջ, Նմանապէս և մեծաքանակ վաճառատանը շատ դեպքերում գերադասում են մանր խանութպաններին իրենու զնորդ (կլիէնտ) ունենալ, քան թէ մանրավաճառքի սեփական խանութներ բանալ վարձու աշխատաւորներով:

Այսպիսի պատճառներով իրենց աշխատանքի անկախութիւնը պահպանող արհեստաւորներն ու խանութպանները շատ նախաձեռն վիճակ ունենալ չեն կարող, և հարկէ, սուրովհետև այդ անկախութիւնը նրանց չէ ապահովում և պայտալիստական շահագործումից: Սակայն ինչդերն այդ չէ, այլ այն, որ նրանք իրենց յաճառ գոյութեամբ թէական են դարձնում թող զբաղւիշտագ բանուրացման տեսութիւնը:

Գ. Կապիտալիզմը ոչ միայն չի կարողանում անհետացնել հին միջին դասակարգը, այլև իր ստեղծած անտեսական և հասարակական կարգերի շնորհիւ, ստեղծում է նոր միջին դասակարգ ևս որ իր քանակով և որակով բացառիկ պիտի և կատարում հանրային կենսքում:

Այս կէտի պարզաբանութեան համար խօսքը տանք հէնց իրեն, Կառնցլան, որը դեռ մի 15-20 ասարի առաջ ամէն կերպ աշխատում էր անտես առնել նրա գոյութիւնը:—

«Հնուամ էլ եղել են պաշտօնեաներ, բժիշկներ, արևեստագետներ, իրաւաբաններ և այլ այսպէս կոչւած մասուր աշխատաւորներ: Սակայն կապիտալիստական խոշոր արդիւնաբերութիւնը և՛ նրա ուսանողները զուգահեռ՝ արդ կերպով տարածող գիտութիւններն ու արանց ծառայող հիմնարկութիւնները կատարելապէս փոխակերպել են մտքի աշխատաւորների թիւն ու նշանակութիւնը: Առաջ նրանք սակաւաթիւ էին և արքայ փոքրածասութեան պաշն էին կազմում: Այսօր մի ընդարձակ

խաւ են դարձել, որ ամբողջ ազգաբնակչութեան համար յիստ մեծ կարեւորութիւն է ներկայացնում «Տեսէր, թէ մի դարուց ք վեր ինչքա՛ն են ընդարձակել դարացական գործը, լրագրութիւնը, պետական և հասարակական ինչդիրները և կապիտալիստական խոշոր գործարանները, որոնք ամէնքն էլ պաշտօնեաներ են դահանջում . . .»

«Եսօրայն պայմաններում ոչ մի հասարակական խաւ այնպէս չէ աճում, ինչպէս ինքնուրոյն գործողների և ծառայողների, մասաւր աշխատաւորների կողմ «մատարականների» խաւերը, որոնց նոր միջին դասակարգ անունն են տալիս . . .»

«Արագօրէն աճում է մատարականների թիւը: Աւելի՛ ևս արագօրէն նրանցից շատերի հասարակական ազդեցութիւնը: Ի՞նչ հսկայական ազդեցութիւն կարող է ունենալ մի զարդ կամ մի լրագրի»: Չերկարացնելու համար՝ չենք մտնում այս նոր միջին դասակարգի զարգացման պատճառների մէջ, Բաւական է, որ հէնց իրենց մարքանների էլ շեշտում են նրա գոյութիւնն ու յառաջադիմութիւնը՝ և այլովսով անուզողներին ընդունում, որ հասարակական կենսքի շրտաւարումը այստեղ ևս շեղւում է գոնուրեւտական Մանիֆէստի և Էրֆուրտի Մրագրի նախագիծած ընթացքից:

Մեր առաջ բերած թական տեղեկութիւններն ու բացարձկութիւնները, կարծում ենք, կսկսած չեն թողնում, որ ժողովրդական զանգամները բանուրացումը նախ շատ դանդաղ է կատարում և ապա՝ բազմապիսի գաղտնագրութիւններով բեկեկուում: Աջք փակել այս իրականութեան վրայ չէին կարող անգոծ աննաւարկաբան մարքսիստները: Այդ պատճառով էլ նրանք, Հայրըրբիցի Մրագրում, բանուրացման տեսութիւնը փոխակերպում են հետեւեալ ձևով:

«Ճարտարաբանի յարաձուռն ծառայման հետ միասին աճում է արդիւնաբերական (industriel) ժողովուրդը դիւզական (landwirtschaftlich) ժողովրդի համեմատութեամբ . . . Կապիտալը անշատեւ է արդիւնաբերող զանգամները արդիւնաբերական միջոցներից և աշխատաւորին ընչազարկ պրպետար դարձրել . . .»

«Միևնույն ժամանակ, խոշոր գործարանների արտեսական առաջնադրութեան հետ միասին՝ մեծանում են հարմարներն ու նշանակութիւնը ամէն առասակ ծառայողների և մատարականների: Սրանց համայնացում աշխատանքի պրոցէսի մէջ կատարում են ղեկավարի, հսկողի, կազմակերպողի և բաշխողի պաշտօններ (Funktion) և գիտական հետախուզութեամբ զարգացնում արդիւնաբերութեան եղանակները: Որքան նրանց թիւը մեծանում է, այնքան նրանց կարգնում են առանձնաշնորհուր վերբերի հասնելու կարելիութիւնը և այնքան էլ նրանց շահերը աւելի՛ ու աւելի՛ ներդաշնակում են մնացած աշխատաւորութեան շահերին»:

Հարկաւոր չէ խոր քննական վերլուծութիւն կատարել հասկանալու համար, որ այս ծրագրային թեզերը յիստիմ.

չին արտադրում էրենց՝ մեջ հասարակական կեանքի իրական պատկերը:

Նրանց առաջին հասածը մի շարք փաստային դրու-
թիւններ է ճշտում, որոնց դէմ, առանձին-առանձին վեր-
ջրած, առարկել չի կարելի: Բայց և միւս կողմից չի կարելի
ընդունել, թէ նրանք, միասին առած, պարզում են հասա-
րակական զարգացման ամբողջակոս ընթացքը: Այսպէս օ-
րինակ՝ ճիշտ է, որ արդիւնագործութեամբ (ինդուստրի)
զբաղւող ժողովուրդը մինչև այժմ գոնէ հեղահեղ շատա-
ցել է գիւղական համեմատութեամբ. սակայն ճիշտ է նաև,
որ վերջինս մնում է ու պիտի մնայ իրրև մի պատկանելի
քանակ հանրային կեանքում, որովհետև ինչպէս, Կառուցիկ
ինքն է խոստովանում մի այլ սեղ, «Փիւղը լեզը վանդ է
ներկայացնում ոչ միայն գիւղատնտեսութեան այլ և անբողջ
հասարակութեան համար» *): Ճիշտ է, որ կապիտալը հըս-
կայական զանգւածների ձեռքից խլել է արդիւնաբերական
միջոցները սակայն ճիշտ է նաև, որ հրապարակում մնում
են ուրիշ Հսկայական գանգաւաններ, որոնք դու ևս յաճա-
ռութեամբ պահում են իրենց տիրապետութիւնը արդիւնաբե-
րական միջոցների վրայ: Վերջապէս ճիշտ է, որ կապիտա-
լը աշխատատեղին ընչազուրկ պրոլետար է դարձնում: Բայց
այս հետ միասին ճիշտ է և այն, որ նա չի կարողանում
իսկ կան գեպքեր, ուր նաև չի ձգտում, բայց աշխատատեղ-
ների ընչազուրկ պրոլետար դարձնելու Լուչ այս երկրորդ
շարքի ճշմարտութիւնների մասին՝ նշանակում է հասարա-
կական զարգացումը միակողմանի կամ աղջտա ձևով ներկա-
յացնել:

Գալով երկրորդ հասածին՝ մենք առանձին առարկե-
լիք չունենք նրա դէմ բացի վերջին նախադասութիւնից ուր
խօսուած է մտաւորականների ու բանուորութեան շահերի ներ-
դաշնակութեան մասին: Ընդունելով հանդերձ, որ այդ սեղ-
դաշնակութիւնը օր-աօր է մեծանում է՝ այնուամենայնիւ իրա-
կանութիւնը ճշմարտօրէն ներկայացնելու համար պէտք էր
վեր հանել մի տարբերութիւն, որ կայ բանուորութեան և
մտաւորականութեան միջև. այդ այն է, որ մինչդեռ բանու-
րութիւնը իր վիճակից և շահերից է մեկնում հանրային
կեանքի նոր հիմքեր դնելիս՝ մտաւորականութիւնը ընդհան-
րապէս, հանրային կեանքը կատարելագործելու պահանջից է
մեկնում բանուորութեան և որ շահերը պաշտպանելու: Այս
տարբերութեամբ է բացատրւում, որ յաճախ, երբ բանուորու-
թիւնը, մղւած իր անմիջական սուր կարիքներից, դասակար-
գային պայքարը յախուռն կերպով առաջ է ձրում՝ նրա զըլ-
իին կամ կողքին կանգնած մտաւորականութիւնը զպիտէ դեր
է կատարում պայքարի մէջ՝ աջքի առաջ ունենալով սրա
վերջնական նպատակը կամ հանրային կեանքի կատարելա-
գործութեան պահանջներն ու նախապայմանները:

Բացի դրանից՝ մեզ թւում է, որ այս հասածում պէտք
էր շեշտել մտաւորականութեան դերը ոչ միայն անտես-
գործութեան մէջ, այլ և հասարակական շարժումների մէջ,
սթէ ճիշտ է, որ ինչպէս Կառուցիկն է առում, «Մտաւորա-
կանները հենց այն դիւրից արտակարգ կարևորութիւն են

ներկայացրել բանուորութեան դասակարգային պայքարի հա-
մար», եթէ ճիշտ է, որ «մի հատիկ մտածող, ինչպէս Մար-
քսը, կարող էր անբողջ բանուորական շարժումը հորիւր աս-
րով առաջ գցել», *) ապա սպասելի էր, որ մտաւորականու-
թեան այս բացառիկ դերի մասին ո՛ր և է արտապայտութիւն
լինելու վերոյիշեալ հասածում:

Այս թերութիւնների բացատրում են նոյն պտածանե-
րով, որոնց մասին ակնարկիւ ենք նախորդ յօդածում, ար-
դիւնաբերութեան կենսորոնցման նոր ձևակերպութիւնը քըն-
նելիս ինչպէս այնտեղ, նոյնպէս և այստեղ՝ մարքսիստները
իրենց նահանջը կատարում են կիսաա խօսքերով, առաձգա-
կան նախադասութիւններով և այլ սեռակի ջգարկումներով
որովհետև դուար է տանեակ տարիներ պաշտպանած
դիւքերից իջնելը: *

Բայց այս թերութիւններով հանդերձ Հայրըլբերգի
Մուդրըլը ժողովրդական զանգւածների բանուրացման ինչորո՞՞
ևս որոշ յառաջադիմութիւն ներկայացնում է իր նախորդի
համեմատութեամբ:

Նախ՝ այստեղ, անտեսական զարգացման հետեանքով
քանակօրէն ուռճացողը միայն վարձու բանուորութիւնը չէ
հանդիսանում, այլ անբողջ արդիւնագործական ժողովուրդը՝
(industrielle Bevoelkerung) որով լուրիային ընդհանուր
շրջանակի մէջ են դրւած արդիւնաբերական միջոցներից
զրկւած վարձու բանուորները և այլ միջոցները դեռ ևս ի-
րենց ձեռքին պահող մանր արդիւնագործները: Սա դեռ ևս
ոչ մարքսիստ ընկերավարականների պահանջած «աշխատատեղ
ժողովուրդը» չէ, անշուշտ, բայց և այնպէս աւելի է բան
ընչազուրկ բանուորութիւնը:

Այնուհետև — և սա ամենագլխաւորն է — առաջին
անգամ մի սոցիալգէմոկրատական ծրագրի մէջ վեր է հան-
ւում մտաւորականութիւնը իրրև մի ինքնուրուին դասակարգ
ու, ոչ թէ իրրև անցնալի ժառանգութիւն պիտի սատիւն-
նաբար սպառւի եւ անհետանայ. այլ անտեսական զարգաց-
ման հետեանքով եւ անտեսական զարգացման համար պի-
տի ոնընդհատ յառաջադիմի: Ճիշտ է, Հայրըլբերգի Մուա-
զըլը հին տեսակէտից գեթ մի փոքրիկ բան փրկելու հա-
մար աշխատում է մտաւորականութիւնը բանուորութեան պո-
չին կապել, ինչպէս որ մի ժամանակ նրան կապիտալիստնե-
րի պղծին էին կապում, բայց հէնց այն փաստը, որ Իս
այսբա՛ն ցայտուն կերպով շեշտում է մտաւորականութեան
դերն ու նշանակութիւնը հասարակական զարգացման պրո-
ցէսի մէջ՝ պարզ ցոյց է տալիս, որ մարքսիզմը մի հսկա-
յական քայլ է կատարում դէպի այն ընկերավարական դարո-
ցը, որը աշխատատեղութեան և մտաւորականութեան ուրա-
նեկողաշնակ գործակցութեան մէջ է տեսնւում ապագայ հա-
սարակակարգի երաշխիքը: . .

Ա. Զ.

* *) Ibid. էջ 37.38

*) K. Kautsky, «Die Proletarische-Revolution» էջ 24

ՎՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՍՈՒՐԵՆ ՍԱՎԱԿԵԱՆ

Վերջին փոստով ձեզ հաղորդում են Հայաստանից, որ Ձեկաչի վճռով գաղտնաձայնով գնդակահարուած է Դաշնակցութեան անձնէր զինուոր՝ ճշեցի Սուրեն Սահակեանը։ Նրա «յանցանքը» կայանում է մեր ընկեր բուլղարացի Յարութիւնին բոլշեկի զահիճների ձիրաններից ազատելու գործին աջակցելու մէջ։ Իր ապկարութիւնը հրապարակալին ճար ու ծանակի չենթարկելու համար Ձեկան չէ վատահանում այս «յանցանքը» դատական քննութեան նիւթ դարձնել, այլ իր վրէժը լուծելու համար զիճում է հետեւեալ ամարդի միջոցին։— Նա միտմիտ հասարակութեան աչքում է այս նկատիոնականի վարկը կոտրելու համար լուր է տարածում, թէ նա մարտնչու է և ապա իր նկուղներում վերջ տալիս նրա կեանքին։

Հայ Յեղափոխութեան Նենեղիզան այս կրկնակի սպանութեան հաշիւը պահանջելու է անշուշտ բոլշեկի ոճբարձրներէրց։ . .

ՄՈՒՎԱԿ ՄՈՎԻԿԵԱՆ

Դիւիջանից մեզ հաղորդում են, որ այնտեղ վախճանուել է ընկ. Մովակ Մովիկեանը, շրջանի Դաշնակցական զաղափարական գործիչներից մէկը, որ մինչև վերջն էլ մնաց կրակակցական դիրքերում։ Ընկ. Մովակը մէկն էր այն համարձակ ճառասօսներից, որոնք զուրա եկան «Երկւիտացիոն համազումարում» մեղակացնելու համար բոլշեկիկեան դաւերը։ Խորհրդային իշխանութիւնը չներկայ նրան այդ քայլի համար և մինչև վերջն էլ հաւանում էր։ Ընկ. Մովակը մեռել է կատարեալ չքաւորութեան մէջ. այնպէս, որ Դիւիջանի քաղաքային խորհուրդը թաղման ծոխսերը ստիպւած է եղել իր վրա առնելու։

ԴԻՄՈՒՄ ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼԻՆ ՁԵՐԲԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻԻ

Հայաստանի վերջին ձերբակալութիւնների աւթիւն է Յ. Դաշնակցութեան կողմից հետեւեալ գրութիւնն է ուղղուած Ա. Ը. Իտալիանախոնայի Գարուալարութեանը.

ՄԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՆԵՐ,

Յաճախից սխաճ Հայաստանից, Ռուսաստանից և Պարսկաստանից գաղտնապի հետազոտներ և նամակներ են աղղում արտասահման Հայաստանում կա-

տարւած ձերբակալութիւնների մասին։ Բոլշեկիկեան մասուլը, որ առիթը չէ փախցնում աղղուկ հանելու, երբ Եւրոպայում կամ Ամերիկայում որ և է կոմունիստ է ձերբակալուած, անբողջ չորս ամիս բար լուրթիւն էր պահում հարիւրաւոր ընկերվարականների բանաստրութեան և աքտրի մասին։

Վերջերս միայն, արտասահմանի հայ աշխատաւորութեան մէջ ձերբակալութեանց լուրերի աղղեցութեանը ճար տուած յուղմունքը մեղմուլու համար՝ «Խորհրդային Հայաստանը» (28 Եպրիլի 1926), որ Հայաստանի կոմունիստական Կուսակցութեան պաշտօնաթերթն է Հանդիսանում, խոստովանում է ձերբակալութիւնների փաստը, միտմանակ ջանալով նապեցնել զոհերի բանակը և խեղաթիւրել հայաճանքները պատճառները։

Բոլշեկիկեան պաշտօնաթերթը յայտարարում է, թէ ձերբակալուած զաշնակցականների թիւը 70 է, մինչդեռ համաձայն մեր ունեցած ստույգ տեղեկութիւնների՝ միայն Հայաստանի մայրաքաղաքում ձերբակալածների թիւը դրանից աւելի է, իսկ գաւաւներում և հարևան երկրներում նրանց ընդհանուր թիւը մի բանի հարիւրի է հասնում։

Աւելի՛ ևս արգահատելի է պաշտօնաթերթը ձերբակալութիւնների բացատրութեան խնկրում։— Նա մեղադրում է մեր ընկերներին թիւրք հակաշեղափոխականների հետ կապեր ունենալու մէջ — մինչդեռ շատ լաւ գիտէ, որ զաշնակցութեան անբողջ կեանքն անցել է այդ հակաշեղափոխականների դէմ պայքար մղելով։ Նա առանց կարծիքու յայտարարում է, թէ մեր ընկերները կապ են պահպանել բանդիտների հետ — այն ինչ մինչև հիմայ աջ ու ձախ հաւատարացնում էր անէրթին, թէ բանդիտիզմը, բոլշեկիկների շնորհիւ իսպառ արմատախիլ է եղլ Հայաստանում։ Նա պընդում է, թէ Դաշնակցութիւնը տերրորիստական գործողութիւններ է կատարել Հայաստանում և իբրև փաստ յիշատակում է ինչ որ գեղարկան խորհրդի բարտուղարի սպանութիւնը — թէև քաջ գիտէ, որ մի ժամանակ ցարական սատրապներին և սուլթաններին ահ ու զողի մէջ պահող Դաշնակցութիւնը, եթէ տերրորիստական մտադրութիւններ սուսցանէ խորհրդային իշխանութեան դէմ՝ գեղարկան ողորմելի պաշտօնետներից չի սկսի իր գործը կն կն։

Միակ ճշմարտը այս պաշտօնական մեղադրանքի մէջ այն է, որ զաշնակցականները արտասահմանից անդեպ ընկերվարական դրականութիւն են ստանում և տարածում Հայ ժողովրդի մէջ։ Բայց թէ սու որբան լուրը հիմք կարող է համարուել հարկու-

բաւոր մարդկանց բանտի և արտորի տւայտանքներին ենթարկելուհամար — այդ ինքնեղ կարող էք դատել:

Չերբակալութիւնների բուն պատճառը, որի մասին խոհեմարար լուծիւն են պահպանում Հայաստանի կարմիր դահլիճները պէջ, է որոնել միայն այն հանգամանքների մէջ, որ նրանք, չնայած իրենց արտազանդին զրպարտութիւններին և կաշառուներին չեն կարողանում Հայաստանում արմատախիլ անել մեր կուսակցութիւնը, որ այտեղ կարելի է ասել միակ խողովակն է հանդիսանում միջազգային ընկերվարրութեան սկզբունքների համար: Ամեն ժամանակի և ամեն տիպի բունկախների պէ՛ս՝ բոլշևիկներն էլ վտանգւած են համարում իրենց գրութիւնը քաղաքական հակառակորդի ժողովրդակալութիւնը տեսնելով: Այս ժողովրդականութիւնը ոչինչ չաջնելու համար նրանք վերջին տարիներս մի քանի անգամ ,,Իաշնակցութեան լիկվիտացիաների՛՛ են կազմակերպել, մի քանի անգամ նրա համար պաշտօնական թաղութներ սարքել — բայց բոլորն ապարդիւն է անցել: Այժմ նոյն նպատակը հետապնդում են նրանք մասսայական ձերբակալութիւնների սարսափով. . .

Այսքանին իրագիկ դարձնելով Ձեզ և Ձեր միջոցով միջազգային բանտութիւնը՝ մենք նպատակ չունենք որ և է բողոք, որ և է ցոյց առաջ բերել բոլշևիկեան այս նոր վարչաութեան դէմ: Որովհետև մենք լաւ դիտենք, թէ ի՛նչ արժէք ունին նրանց աչքում նման բողոքներն ու ցոյցերը՝ անգամ եթէ նրանք ընկերվարական, կամ նոյն իսկ կոմունիստական կուսակցութիւնների մէջ կազմակերպուած բանտութիւնից են գալիս: Բոլշևիկները վաղո՛ւց են կտրել իրենց քարոյական կապերը ընկերվարութեան և կոմունիզմի հետ՝ նման ցոյցերից մտահոգուելու համար:

Մեր գրութեան նպատակն է զանազան պատգամաւորութիւնների միտումնաւոր զեկուցումներով մտլորութեան մէջ ընկնող բանտորներին մեր ղեքաղղ երկրի օրինակով պարզել, թէ լինչ է ներկայցնում բոլշևիկեան լծի տակ ընկած ժողովրդների կեանքը իր անպահճճ մերկութեան մէջ: Այդ պատգամաւորութիւնները և մասնաւորապէս աստրիական պատգամաւորութիւնը, որ վերոյիշեալ ձերբակալութիւններից յետոյ է աչցելիլ Հայաստան, եթէ մեր իրականութիւնը դիտեին անկաշառ բանտրի աչքով՝ բոլորովին այլ ձևով կարոտայտուէին նրա մասին, քան անում են նրանք իրենց հրապարակային զեկուցումների մէջ:

Իաշնակցութեան ղեկավար մարմիններն առայժմ չարաճ ուշալրութեամբ հ'աւուռձ են հալա-

ժանքների ընթացքին՝ ամեն ջանք գործ դնելով որ կուսակցական շարքերը զգաստ մտան և չենթարկւեն այս նոր պրոլիտակոնին: Մակայն եթէ բոլշևիկներն իրենց վարչաութիւնը ժամանակին չճեղմեն, և մասնաւորապէս, եթէ նրանք մեր կուսակցութիւնը ,,Քիղբապէս ոչնչացնելու՛՛ իրենց հին ծրարին ընթացք տալով սպանութիւնների դիմեն մեր ընկերների դէմ՝ երկիւղ ենք կրում, որ սա այնպիսի սոսկալի արեւհեղութիւնների զուռ բանաչ, որոնց հետեանքները ղեքար է նախատեսել:

Հ. Յ. ԳՐՈՒԵՂՅԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՋ

Անցեալ Հոկտեմբերին, երբ տեղի ունեցաւ Հ. Յ. Գ. Եւրոպայի 3-րդ շրջանային ժողովը, Յրանապի մէջ կար միայն 3 կուսակցական կեդրոն — Փարիզ, Լիօն և Մարսէյ: Այժմ այդ թիւը բարձրացած է հինգի. աւելցած են Վալադիսի ու Լուստի շրջանային կոմիտէները: Կազմակերպութեան արդի վիճակն է. ֆարիզ՝ 7 խումբ և Ուսանողական Միութիւն: Լիօնի շրջան — Լիօնի, Տեսիսի և Փօստի Շէքի խումբերը: Վալադիսի շրջան — Լաւադի, Ռոմանի, Կրեյսուլի և Լը Ռուզէնի խումբերը: Լուստի շրջան — Սէն-Շամօնի, Սէնթ էթիէնի և Լորէնթի խումբերը: Մարսէյի շրջան — Մարսէյ 3 խումբ, Պատանկեան Միութիւն, Պօլէնի, Կարտուսի, Լասէյն թուլօնի և Մարթիկի խումբերը: Պէլիգուայի շրջան — Պրիւքէի և Անվէրոի խումբերը: Պրազայի մէջ կայ Ուսանողական Միութիւն, նրուն կապուած են և Գերմանիոյ ու Վիէնայի գաշն. ուսանողները: Պերլինի մէջ կայ խումբ մը: Յրանապի մէջ կան խումբեր և Տէքազվիլի, Դառնէլ-Սարազէնի և Թուլուզի մէջ: Ամէն անդ խումբերն ունին նեքին կուսակցական աշխատանքներ և եռանդով կը մասնակցին զաղութի ազգային-մշակոյթային կեանքին: Դաշնակցական հրապարակային ժողովներն ու հանդէսները միշտ լեցուն են ժողովականներով անոնք զաղութի մէջ վառ կը պահեն հարեւնիքի գաղափարն ու զաղութանայ զանգւածները կապուած կը պահեն Հայաստանի հետ: Դաշնակցութեան հանդէպ թշնամական դիրքի մէջ կը գտնուին կոմունիստ և ուսմկալար տարրերը, որոնք պլօքը «Հօգ»-երու միջոցով կատարել պայքար կը մղէ մեր կուսակցութեան դէմ, միշտ գիմնելով անթոյատրելի միջոցներու: Ամէն տեղ, սակայն, զաղութանայ աշխատաւորութեան և երիտասարդ սերնդի անվերապահ համակրանքը Դաշնակցութեան հետ է:

ՄԵՐ ՄԵՐՈՒԼ

Ապրիլի մէկէն սկսած Եգիպտոսի «Յուսաբեր»ը սկսած է լոյս տեսնել իբրև օրաթերթ: Նոյն ժամանակէն երկօրեայ է դարձած Սուբիոյ «Նոր Փրեսիկ»-ը:

ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼԸ

Ա. Ը. ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼԻ ԳՈՐԾԱԳԻՐ ԳՈՐԾՔԷՆ ՈՒՆԵՐԿԱՆ ԻՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՆԵՐԸ անդալ ամսի 11—12-ին Յիւրիլուան ներկայ էին գրեթէ բոլոր երկրների ներկայացուցիչները: Բայց որանցից, խորհրդական ձայնով հրակրում էին նաև չընկերվարական կանանց և ընկերվարական երկատարողութան Խնտերնասիոնայի պատգամաւորները: Օրակարգի մէջ նշանակած էին մի շարք քաղաքական տնտեսական և կազմակերպական հարցեր:

Տեղի սրբութան՝ պատճառով ի վիճակի չլինելով կանգ առնել այս բոլոր հարցերի վրայ՝ մենք այս անգամ վեր կհանենք նրանցից մէկը միայն, որ Գործադիր Կոմիտեի զբաղմունքների օգնությամբ էր կազմուած Դա կոնցիստական և ընկերվարական Խնտերնասիոնայների միաձուլման հարցն է, որ ինչպէս դիտեն մեր ընթերցողները, առաջադրւած էր անգլիական Եկեղեցի Սոցիալատարական Կուսակցութեան կողմից: Գործադիր Կոմիտեն յատուկ յանձնախմբին միջոցով հանգամանորէն քննելով այս խնդրի՝ բոլորի ձայնով ընդգէմ երկուսի ընդունում է մի բանաձև, որի մէջ ցաւ յայտնելով հանդերձ, որ բանտրութիւնը ներհակ բանակների բաժանուած լինելով չի կարողանում քաղաքական պայքարների ժամանակ հանդէս գալ իր քանակին և որակին համապատասխան ուժով՝ անյուսմաննախիւ վաղաժամ է համարում երկու Խնտերնասիոնայների միացման առաջարկը, քանի դեռ կոնցիստանտնուլը շարունակուած են ընկերվարական կուսակցութիւնների դէմ բանտով, քարտով և սպանութիւններով պայքարել:

ԳԵՐԾՆԱՍԻՈՆԱԼԻ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿԿՈՒԹԻՒՆԸ անցեալ մ.թ.ա խմբին մէջ ժողովրդական պայքար ղեկավարեց, որ իր տնտեսական շնորհի տեղ է զբաղում ինտերնասիոնայի պատճառութեան մէջ:

Յայտնի է, որ գերմանական յեղափոխութիւնը անձարակ գանձեց նախկին իշխանական տների ստացածը պետականացնելու գործում, մինչդեռ Ֆրանսական, ռուսական, աւստրիական և յեախկան յեղափոխութիւնները այդ խնդիրը արձատարապէս կարգադրեցին: Հիմնելով սահմանադրութեան այն կետի վրայ, որով ժամանաւոր սեփականութիւնը ապահովուած է քաղաքացիների համար՝ վերոյշեալ իշխանական տները թւով 22 հաս Վերջին, տարիներս զատական ճանապարհով պահանջում են իրենց վերադարձնել այն ստացածքները, որոնց վրայ յեղափոխութեան ժամանակ պետութիւնն իր փաստական (բայց ոչ օրինական) տիրապետութիւնն է հաստատել: Նրանց պահանջների ընդհանուր գումարն հասնում է ծոտ 2 ու կէս միլիարդ մարկի: Սրանց մէջ գնւում են 500,000 հեկտար վարելահող և անտառ, հարիւրի չափ իշխանական շէնքերը, 500 միլիոնի արժէք ներկայացնող օսկոններ, արծաթեղէն և այլ թանկագին իրեր, տարիկան 150 միլիոն կինամթռակ իշխանազուհեների համար ևն ևն:

Տեսնելով, որ գերմանական դատարանները, որոնց մէջ դեռ բազմած են հին իշխման պաշտօնները, մէկը միւսի հետևից վերադարձնում են գահընկեց իշխաններին ժողովրդի մէջընդ պարտաւորութիւնները և յայտնենալով Բախտագի (խորհրդարան) միջոցով այս չարիքի առաջն

առնել՝ Սոցիալ-Դեմոկրատիան պահանջում է ժողովրդական հանրաքուէով (բեֆերենդում) ազգայնացնել նախկին իշխանական տների ստացածը՝ առանց որ և է հատուցման:

Ըստ գերմանական սահմանադրութեան հանրաքուէարկութիւնը կատարուած է հետեւեալ կերպով.— Առաջարկը կարող է գալ կամ ընարական ձայն ունեցող 5000 քաղաքացիների կողմից, և կամ մի կուսակցութեան կողմից, որ վերջին ընարութիւններին շահել է ոչ պակաս քան 100000 քուէ: Բ. Այս առաջարկը պետք է անձնական ստորագրութեամբ երկրորդն վերջին ընդհանուր ընտրութիւնների ժամանակ քուէ առած քաղաքացիների առնալով 10% ը: Գ. Սրանից յետոյ երկրորդաժամ առաջարկը ներկայացուած է Բախտագին Վերջին կամ կընդունի հանրաքուէի դրեկից առաջարկը նախաձեռնողների ձևակերպութեամբ և կամ նրա մէջ փոփոխութիւններ իր մտքիւ Առաջին դեպքում այլևս ժողովրդական քուէարկութեան կարիք չի լինի, որովհետև նախաձեռնողների ցանկութիւնը օրէնք է դառնում, իսկ երկրորդ դեպքում՝ ժողովուրդը, այս անգամ զաղծնի քուէարկութեամբ պետի որշել, թէ արդեօք իր համար նախաձեռնողների ձևակերպութիւնն է ընդունելի, թէ Ռայխտագինը: Սրանից որը շատ ձայն ստացաւ նա էլ պարտադիր օրէնք կդառնայ, անկախ ձայն սուղների ընդհանուր քանակից:

Այս պայմաններից առաջինի մասին խօսք լինել չէր կարող, որովհետև Սոցիալ-Դեմոկրատիան վերջին ընտրութիւնների ժամանակ 100,000ից շատ աւել է (ծոտ 8 միլիոն) քուէ էր շահել: Դեմարութիւնը երկրորդ պայմանի մէջ էլ Վերջին ընտրութիւններին ժամանակէն էին ծոտ 40 միլիոն գերմանացի: Հետևաբար հարկաւոր էր հասաքն 4 միլիոն (10%) ստորագրութիւն և այն էլ սեփական ժախտով ոչովհետև ըստ սահմանադրութեան՝ հանրաքուէի առաջարկը երկրորդիւր համար պետութիւնը որոշ գիւրութիւններ տալիս է, բայց մասին դրամ չի արձանդրում նախաձեռնողներին: Եւ ահա Սոցիալ-Դեմոկրատիան գերմանական Կոնցուստական Կուսակցութեան հետ միասին, որ այս խնդրում յարել էր նրան, մի տեղախնայ աշխատանքի է լծուած:

Նկատի ունենալով գերմանական ժողովրդի պահանջողական ոգին և թուրքիւնը նախկին իշխանների հանդեպ՝ նա իր նախաձեռնութեան նպատակը ձեւակերպել էր ժողովրդին շատ հասկանալի ձևով. պետք է խել իշխանական կալածներն ու քոչքերը՝ բաւարարելու համար պատերազմի ժամանակ զեաւաւաններին, մանր հրատեղիներին, դրամի անկման պատճառով փոքրիկ ինյուդութիւնները՝ իրրցրածներին, որբերին, այրիներին ևն: Բայց այս հարցի շարքը սրբապազանդ մղել Գերմանայի 60 հազար համայնքների մէջ — դիւրին գործ չէր:

Գաղափար տալու համար կատարուած աշխատանքի մասին բաւական է ասել, որ ընդամենը մի քանի շաբթեա ընթացքում Սոցիալ-Դեմոկրատիան ուղարկուած է շրջանները 30,000 շրջաբնական, 300,000 ստորագրութեան թերթ, 2 միլիոն պրոպագանդի գրքոյնիկ, 85,000 աֆիշ, 20,000 օրինակ հրահանգներ և ցուցմունքներ պրոպագանդիստների համար, բազմաթիւ բնօրինակներ ևն ևն:

Ստացուած արդիւնքը ստեղծել մէջ թողցեց լուստաններ ինչպէս ընտրութիւններին իսկ: Երկու շաբթեայ ընթացքում (Մարտի 4—17) հանրաքուէի պահանջը երկրորդների թիւը հասաւ

12,516,673 Հոգու, այսինքն երեք անգամ աւելի, քան Հոր-
կաւոր էր վերոյիշեալ պահանջին օրինական ընթաց տա-
լու համար, նկատի ունենալով, որ վերջին ընդհանուր ըն-
տրութիւններին ընկերավարականներն ու կոմունիստները ճիա-
սին ստացել են ընդամենը 10,688,974 ձախ, պէտք է ըն-
դունիլ ուղեմն, որ բուրժուական խաւերից էլ բաւական թւով
ձարկիկ միացել են Սոցիալ-Դեմոկրատիայի առաջարկին:

Այժմ այդ առաջարկը մտնում է իր երրորդ փուլի մէջ
օրէնք դառնալու համար: Եթէ Ռաշխատող անխփուկ շէն-
դունի այն՝ առաջին անգամ ճի մեծ պետութեան մէջ մեծ ք-
հանգիստտես կլինենք ուղղակի ժողովրդական քաւարկութեամբ
օրէնքներ հաստատելու գործին: Պէտք է նկատել, որ այս-
տեղ մի դժարութիւն էս կայ: Եթէ կաւալարութեանը, ու-
րաշաւ կարգով ապացուցեց, որ Սոցիալ-Դեմոկրատիայն ա-
ռաջարկը հաստատել է պետական սահմանադրութեանը, որի
մէջ, ինչպէս ասացինք, մասնաւոր սեփականատէրութեանը
օրինականացում է, այդ դեպքում վերոյիշեալ առաջարկը
այլևս օրէնքի ոչ չի կարող ունենալ հաստատական մեծա-
մասնութեամբ, այլ զրա համար պիտի պահանջուի վերջին
ընտրութիւններին մասնակցողների մեծամասնութեան քե-
ները, որ հաստատու են ձառ 20 միլիոնի:



ԴՆՆԵՄԱՐԳԻ ընկերավարական, կուսակցութիւնը շնայած
անցեալ տարւայ գործադրութեանը և lok. aut-ներին, 3300
նոր անդամի աճում է անեցիկ, որով միայն վերջին երկու
տարում նրա նոր անդամները թիւը անցնում է 15000 ից:
Կուսակցութիւնը ներկայումս ունի 999 ծորձին 146,496
անդամով: Երանցից 46140ը կոմսոց են կողմակերպւած աղա-
մարդկանց հետ խառն Վերոյիշեալ ձարկներէրց միայն 100ն
են քաղաքներում, մնացած 899ը դուրսում են զիւրկական հա-
մայններում: Եթէ նկատի ունենանք, որ վերջիններս ընդ-
հանուր թիւն է 1300, այն ժամանակ պարզ կլինի թէ ըն-
կերավարական կուսակցութիւնը ի՞նչ՝ ամենատուրեանք է ձա-
ւալում զիւրկական շրջաններում:

Ներքին քաղաքականութեան մէջ, այս կուսակցութեան
զիւաւոր խնդիրն է զինաթափութիւնը: Փորքիկ Դանեմարքը,
շրջապատւած անպիտի ուժերով, որոնցից ոչ մէկը չէս պո-
տերազմի բռնել չի կարող, այնուամենայնիւ, աւանդական
սովորութեամբ, պահում է իր չլին ուղղակի հաստատու-
թիւնները թէ՛ ծովի և թէ՛ ցամաքի վրայ՝ նրանց համար
տարեկան 60—70 միլիոն ձախ անխփու Վերջին խորհրդ-
արկութեան ընտրութիւնները իտայ ուղղակիարների օժան-
դակութեամբ կաւալարութեան գրուին անդնելով՝ Դանեմար-
քի ընկերները իրենց ներքին քաղաքականութեան մեկն են
գարձում ժողովուրդը այս անիմաստ ձախից պատելու
գործը: Անցեալ Մարտի 12-ին Ռարհրպարանը ընկերավարա-
կան կուսակցութեան առաջարկով ընդունեց մի օրինագիծ, որ
եթէ օրէնք դարձաւ, իսկապէս որ մի նոր դարադրութիւն կը
բանայ զինաթափութեան և համաշխարհային խաղաղութեան
համար:

Քաւարկւած օրինագիծ զիւաւոր տրամադրութիւնները
սրանք են.— Զօրքը և նաւատորմը այլ նպատակ չունին,
բայց եթէ պաշտպանիկ Դանեմարքի քեղքութիւնը և կա-
տարի Ազգերի դաշնակցութեան հանդէպ ստանցած պար-
տականութիւնները: Զօրական և ծովային նախարարութիւն-

ները վերացում են և վերակազմեալ բանակն և տորձիլը
ենթարկւում են անմիջապէս վարչապետին: Պարտադիր զին-
ւարական ծառայութիւնը փոխարինւում է տարեկան ոչ աւելի
քան 100) կամաւորների զորակազմով: Յոմարային զօրքի թի-
ւը իջնում է 13000-ի, իսկ տորձիլի ուժը ձառ 30 փոքրիկ
ուղղակիներով, որոնց ընդհանուր տարակազմութիւնը (տանկով)
պիտի լինի 13000 տան Այս բոլոր ուղղակիան ուժերի տա-
րեկան ձախար պէտք է լինի ոչ աւելի քան 17 միլիոն կրոն:

Ռարհրպարանին այս օրինագիծն ընդունել տարը ան-
կատիւ, մեծ յաջողութիւն է, բայց ոչ վերջնական, որովհե-
տե կայ և սենատը, որտեղ պահպանողականները մեծամաս-
նութիւն են կողմում: Թէ ի՞նչ միջոցներով պէտք է դիմէ
ընկերավարականների կաւալարութիւնը վերջիններս ընդդե-
մութիւնը խորտակելու համար, գեա յայտնի չէ:

ԼեհԱՍՏԱՆԻ Լեհական Ընկերավար. Կուսակցութիւնը
(P. P. S.) և գերմանական Սոցիալ-Դեմոկրատիան, անցեալ
ամսին մի խորհրդաժողով են գումարել Լոզձում երկու կու-
սակցութիւնների փոխյարաբերութիւնները, որոնք բաւական
աննախանձիկ պատիկ էլին երկրպագանում միեւեկ վերա-
կարգաւորելու համար: Ռարհրպարանը միաձայնութեամբ
որոշում է արժանապէս վերջ տալ բոլոր ներքին պայքար-
ներին և թէ՛ խորհրդարանում, թէ համայնական հաստա-
տութիւններում միացած ձախտով հանդես գալ աշխատա-
ւորութեան շահերը պաշտպանելու համար: Խորհրդաժողովը
յատուկ ընտրութեան նրթ է դարձնում ազգերի փոքրամաս-
նութեան խնդիրը և այդտեղ ևս որոշում՝ միացնել երկու կու-
սակցութեանց ջանքերը այդ փոքրամասնութիւնների ազգա-
յին-մշակութային գործադրումը պահպանելու համար:

ԱՄՍՏՐԱՒԻԱՅԻՎեց դաշնակցի պետութիւնները չլին-
գում վարչութիւնը գտնում է ընկերավարականների ձեռքին
Վեշեբա նրանց յաջողակց, օրինական ճանապարհով, ամ-
բողջ երկրում հաստատել տալ շրջապահուն 44 ժամայ աշ-
խատածքի օրէնքը: Բայց ստիկականական պաշտօնակները
մնացած բոլոր վարձու աշխատատեղերը թէ՛ քաղաքում և
թէ՛ զիւրկում, այսուհետև պիտի գործեն համաձայն այս
օրէնքի:

Աւտրիայական բուրժուական, որ առաջ ազատամետ
քաղաքականութեամբ էր աշխատում հակազդել ընկերավարա-
կան յայթական ընթացքին՝ այժմ իր փրկութիւնը օտա-
նում է Փաշիգի մէջ, Մակայն Ընկերավարական Կուսակցու-
թիւնն ու արհեստակցական միութիւնները շատ լաւ են կազ-
մակերպւած այնտեղ՝ այս Փաշխատական ձգտումների մէջ
մի իրական վստանք տեսնելու համար:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՈՒՍՏԱԿՆԵՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆ, Դեկտեմբ. 18ին 1925 թ.

Կեանքը սարսափելիորեն թանկ է: Այդանք չկայ. կոպերատիվները դատարի, ծանաւոր խնամութիւնը նոյնպէս. Պատերազմական շրջանի և ճանաւանդ բարձրագոյն կոմունիզմի օւնչի՛ հաշակաւոր «օգրեները» (Հերթի կանգնելը) նորից հրապարակի վրայ է. երբեմն երկար ժամերով Հերթի պէտք է սպասես մի քանի արշին կտաւ կամ մի ֆունտ շաքար գնելու. Համար: Առանձնապէս սուր զգացում է նախքան պակասը, որովհետեւ խորհրդային անտեսութեան նախապէս ճիւղը ամէնից շատ իր «վերելքն» է ասարկը. Գործազուրկների թիւը միայն Երևանում, և այն էլ պաշտօնական տեղեկութիւններով, չորս Հազարից սնչում է:

Տնտեսական այս տաղանակ խորհրդային իւրայատուկ բեժիթի տակ իւրայատուկ երեւոյթներ է աւաջ բերում: Դրանցից մէկը զրույթիւնն է: Չկայ պետական մի Հիմնարկութիւն կամ ձեռնարկ, որ չունենայ իր գործերի կոնտրոլը: Եւ եթէ նկատի ունենանք, որ բոլոր Հիմնարկութիւնների ու ձեռնարկների զարկեպակ կոմունիստների ձեռքն է՝ ապա երբակացութիւնը պարզ կլինի...

Աստիճանաբար երեսան Հանուդ խայտաւորութիւնների առթիւ՝ Կոմունիստական Պետակցութեան «երեւելիներէրց» մի քանիսը, որոնք իրենց դիրքը բաւական ամուր են զգում քրէնոպական ազատութիւն տալու. Համար իրենց լեզուներին — յաճախ խտտովանել են, որ էլի անկուսակցականներն են, որ մարտը են մեռն վրամական հարցերում և պատասխանատուութեան զգայուն ցոյց տալիս իրենց յանձնած գործերի մէջ:

Ուայց այսօրինակ խտտովանութիւնները Հօ նրա համար չեն արուած, որ նրանցից հաճապատասխան եզրակացութիւն հանուի. Բնաւ ոչ: Նրանք պարզօրէն այրած սրտի միտքարանք են, կամ, ազատութիւն և յանդուգն երեսալու ձգտում: Ապացոյց՝ որ, չնայած այդ խտտովանութիւններին, հարածային կարգով առաջ է տարուած պետական անբողջ ապարտի «կուսակցականները»: «Կուսակցականացում» են վարչական, դատարան, պիւնտրակայն, անտեսական բոլոր հաստատութիւնները՝ ոչ-կոմունիստներից՝ պաշտօնները իլելով և կոմունիստներին տալով:

Այժմ էլ այս «հարածային կամպանիայի» տակ է ընկնու ուսուցչութիւնը. Բաւական չէ, որ հասարակաբիրտութիւնը կամ նրա հետ սերտօրէն կապւած աւարկաները (պատմութիւն քաղաքատնտեսութիւն են) աւանդեն կոմունիստների կողմէ, պէտք է «Բարձրացնել» անբողջ պարտական գործը. Իսկ ու իրականում նշանակուած է, որ պէտք է փոխարինել բոլոր ուսուցիչներին, անգամ համալսարանի պրոֆեսորներին կուսակցական «պարտաւասած» ընկերներով:

Սակայն որովհետեւ «պարտաւասած» ընկերների թիւը շատ չէ, իսկ եզրանների համար էլ ուսուցչութիւնը մեծ հրապարակ է ներկայացնում, որովհետեւ ո՛չ կարգին ուճիկ է

*) Այս Բովնակութիւնը պատահական մի պատճառով ու է հոտուի Բու: ՄԴԲ.

տալիս և ոչ էլ շահատակութիւնների լայն հնարաւորութիւններ՝ օւստի որոշել են այս ձևապատճառ ևս գարտնի ֆունկերի սխտածը կիրաւել:

Թերեւս ոճանց համար պարզ չլինի, թէ ի՞նչ սխտած է սա. բացատրեմ երկու խօսքով:— Անէն Հիմնարկութիւն այստեղ ունի իր գարտնի ֆունդը, որ գահուած է Գոմ. Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի անմիջական հսկողութեան տակ: Այս ֆունդից նպաստներ են տրուած Հիմնարկութեան մէջ ծառայող կոմունիստական բըշիշ ընկերներին երկու նկատուածով. նախ՝ դրանով ուղղուած են աւելել սրանց սիրտը, որպէսզի շատ չարտնջան թէ ինչո՞ւ իրենց կուսակցական գլխաւորները յաճախ մի քանի անգամ աւելի ուճիկ են օտանում, քան իրենք և պատ՝ որպէսզի նրանք կախած լինելով Գ. Կոմիտէին՝ իրեն նրա գործակալները հսկեն անկուսակցական շնայատի քայլերին ու արածագրութիւններին... Այս սխտածով ձեռքի տակից յանելակ ուճիկներ յատկացնելով կոմունիստ ուսուցիչներին համար, ենթադրուած է բաւականաչափ ընկերներ քաշել դեպի ուսուցչական ապարեղը և աշակիտով դրոյրը «Խարձայնելու» Իսկ որպէսզի «Թարանցում» էլ հարածային կարգով լինի՝ սկսել են աշակաւոր գարնել. թէ ուսուցիչներն այն չեն, ինչ որ պէտք է վիճեն, թէ զպրոջը նրանց ձեռքին թողնելը վատնաւոր է տիրող բեժիթի համար, թէ պէտք է ժամ առաջ ապատել մատող սերունդը նրանց վատասերող ազդեցութիւնից ևն. ևն.:

Ապագայ Հայ պատմագիրը երախտագրութեամբ պէտք է վեր հանի այն արծմանովայնի կեցածքը, որ երեսուն են բերում աչքան անիրաւած անկուսակցական ուսուցիչներն ու մտաւորականները:— Իրենց սրտի խորքում ասելով կոմունիստական դիկատուարան՝ իրեն մարդու մարքի, խղճի և խօսքի ազատութիւնը ոտնահարող մի բաւականութիւն՝ նրանք, հաշիք աւանդով մեր երկրի պայմանները, լօյտով դիրք են բռնել նրա հանդէպ և մինչև անգամ ծանր որհաւբերութիւնների են գնում նրան չխրոչնդելու համար: Նրանք դիտեն, որ կոմիսարներն ու չեկաներն իրենց հիւրերը չեն, որ խրանելուց թողնեն հեռանան, այդ պատճառով հարածու են նրանց փատասխան պլանութեան հետ և նրանցով չեն զբաղուած:

Անկուսակցական Հայ ուսուցիչն ու մտաւորականը իրենց զբաղմի նիւթն են դարձնել մեր երկրի վերաշինութիւնը, մեր ժողովրդի անտեսական կուլտուրական բարձրացումը և մեր պետականութեան մնայորդների պահպանումը: Նրանք դիտեն, թէ ի՞նչ ասել է երկիր, ժողովուրդը պետականութիւն և ինչ՞ պատահական իշխանութիւններ Այդ պատճառով էլ օրւայ իշխանութեան հանդէպ տածած բնական ատելութեան պատճառով մեն լքում իրենց նախկին պրոբը, ինչպէս այդ անուճ էր մի քանի տարի առաջ Հայ ատելը կրելու անարժան ճարտիկ՝ ասելով. «ուսիլ՝ լաւ է Թերեքիս օտանց՝ Դաշնակցութեան քան թէ հայաստան պաշնակցական կուսակցութիւնով...»

Այս քրտնաջան աշխատանքը ի սեր հայրենիքի վերածնութեան բնականաբար անհկատ չէ մեռն: Ժողովուրդը, որ այժմ շատ լաւ գիտէ տարբերել հրապարակային ճիշդին ու բեկամները կենդանի գործից՝ տեսնում է, որ եթէ «խորհրդային» վերաշինութեան մէջ պրոբնեւալու մի բան կայ, այդ էլ մասնաւոր նպիտանեւտեպէան և անկուսակցական մտաւոր

բականները նախանձանկերովեանը պէտք է վերադրել: Դրա համար նա, որ կարելի է սակ բացայայտ արհամարհանք է տածու՞մ դէպի կորսնոր աքլորները, մի առանձին գուրգուրանքով և սիրով է ձօնենու՞մ ի՛ր ուսուցիչներին, ի՛ր մտաւորականներին: Այս ժողովրդականութիւնն է ահա, որ կատարեցնում է սեփական շաքիջ սարսուղած կոմունիստներին:

Առաջմ աջ կատարութիւնն արտայայտուած է պիտական և հանրային հաստատութիւններից անկասկածականներին գուր շարտելու «Հարաձայն» պահանջով: Լաւ է, եթէ ինչպէր սրանով սահմանափակուի թէ չէ, կոմունիստական բարձրը ճանաչելով ամենեւին զարմանալի չի լինի, եթէ վաղն էլ «Հակախղափոխութեան ահագանքը» հնչեցնեն. որպէսզի այս ատելի անկուսակցականներին «օրինակես» չեզոքացնեն պետական և հանրային գործերից: ԴԻՏՈՂ

ԱՆԴ. ԿԵՆՏ. ԿՈՐԾԻՍՄԱՆ ԵՐԵՒԱՆԻՍ

ԵՐԵՒԱՆ, 9 Փետր. 926 թ.

Հայաստանն էլ փառքի օրեր ապրեց: Ռիզովեան օրերից յետոյ՝ Անդ. Կենտ. Կործկոմի նոտաշրջանի օրեր Երեւանում: Այս պատմական օրերը Հայ ժողովուրդը դժար թէ ձուռնայ, որովհետեւ դեռ 925ի դեկտեմբերի վերջերից ձեռք առնւած կանխազուշտան միջոցները՝ ձերբակալութիւններ և խուզարկութիւններ՝ Հայ ժողովրդին վերադրեցին 1924ի յունար-փետրարեան սարսուղները: Հայաստանի ամենազօր Ձեկան կարծէք անկարող էր միանալ այդ ծանր աշխատանքը տանելու՝ Անդրկովկասի Ձեկան էլ օգնութեան էր կանչուած: Եւ մինչև նոտաշրջանի բացումն ու անփառուակ վախճանը, նրանք բոլոր անադնիւ միջոցները գործ դրին՝ ապացուցելու իրենց զոյտութեան անհրաժեշտութիւնը:

Յունար 25ին, համաձայն տրւած յայտարարութեան, Երեւան ժամանեցին Վրաստանից և Արդիւնանից սպասուող պատգամաւորները: Օրը արեւոտ էր և երանակը նպաստաւոր ժողովուրդը գրաւել էր Երպեան փողոցի երկու կողմերը, իր «թամաշիլ» հետաքրքրութեամբ և ոչ թէ խանդավառ ընդունելութեան ցոյց տալու համար, ինչպէս սովոր են յայտարարելու այս երկրի ինքնակոչ տէրերը: Դրա ապացոյցը եղաւ «Թոմաշիլ» ժողովի փառաբոր սպոսիներ, որ առանկ կարծելու կերպն է ամբողջն Աղաձայն-օղիները, միայնկաները: Թանոյեանները ժամը 10ին ազարար նշան է արու՞մ Անդր. Կենտ. Կործկոմի անդամների ժամանելուն: Զօրք, մեկըցիա, չեկիստ, բոլորը իրար են անդել «ձամբայ է բացու՞մ»: 15 Հաս աւտօներ իրար ետևից սուբալով ճշարով մասն Արդիւնան փողոցը և շարունակեցին «մարբուտը» դէպի հիւրերի հանգրտանելին: Բաց ի զուր անցան ակնկալող Հայացքները: Թանոյեանի և ընկիւնների բախները Մացին անպատասխան Ոչ մի ձայն, ոչ մի հուռա՛: Մառաննի կատարութիւնն էր բռնել: մի քանի կոմսոցներ հազի կարողացան ձարել՝ հուռա՛ կանչել տուր համար, բայց արդէն ուշացած էին:

Այս երկրում ամենալուրջ քայլերն անգամ բանիմաց և մտածող ճարուտ հոգում ձի՞մաղ են առաջացնում. որովհետեւ ամէն բան կատարու՞մ է վարագուրած ձեւով, ամէն ինչ ձուռնեցնում է յօգուտ իշխողների սիրակալութեան համար:

ճար, կոնֆերանս՝ դրանք բոլորը ձեռական բաներ են, միաժողովներին խաբելու համար. իսկ համագումարների աշխատանքների և նրանց որոշումների մասին ալուս՞մ ուսուցիչ յայտարարութիւնները — բացարձակ ստախոսութիւն: Դեռ Կենտ. Կործկոմի նոտաշրջանից առաջ Անդրկովկ. կուսակցական կոմիտէն բոլոր գեկուցելիք ինչոքների մասին նախօրք պատրաստու՞մ բանաձեւեր ունի, որոնք, ըստ իրենց սովորութեան քէւարկութեան են տրու՞մ, հարցնելով միայն թէ ո՞վ է դէ՞մ իսկ Կոմ. Կուսակցութեան բանաձեւին ոչ ոք չի համարձակու՞մ դէ՞մ լինել: Նոյնիսկ համագումարին մասնակցող Կոմ. Ֆրակցիան իրաւունք չունի առարկութիւն անելու, որովհետեւ վերից պահանջու՞մ է կոյր կամակատարութիւն:

Նախքան նոտաշրջանի բացումը, ոմանք չափազանց բաւատես էին և յոյս ունէին, որ այս անգամ, կարելի պիտի լինի Ախալքալաքի հարցը և քոյի հարցը դրական ճտքով լուծելու. բայց հիասթափութիւնը խոշոր եղաւ. Քոչի և տերիտորիալ իրաւունքի հարցը Մաքօ Համբարձու՞մանի դէկուցման ձեշ փոքրացաւ և դարձաւ արտասուղիների խնդիր: Նա կարկանձելով ճառնանշեց միտն, որ հակառակ Հայ ժողովրդի սակաւահոգութեան, մեր լեռնային արտաների 63% ից օգուտն են քուչուրները: Հազիւ այս անձարակ գեկուցումը վերջացրել էր՝ դուրս եկաւ Արձայն-օղին և յայտարարեց, որ այդ հարցը վարձանակ երանակով չի կարելի լուծել. այլ ժամանակի կը կարօտի: Նախքան այդ հարցին անցնելը, աւսու՞մ է նա, մենք պէտք է քուչուրներին կապէք այլ և այն կուտուբական աշխատանքի և կենցաղի հետ:

Ուրեմն՝ հօղի սակաւութիւնից խեղուտ Հայ ժողովուրդը, յանուն կոմունիզմի, պէտք է տանջի, պէտք է ոռլած Մնայ անքան ժամանակ մինչև Մուգանի ժողովուրդը կուտուրապէս բարձրանայ և դողրի քուչուր լինելուց. մինչ վերջին պէտք է օգուտի Հայաստանի լեռնային արտասուղիներին...

Իսկ Ախալքալաքի հարցի մասին չարտայայտեցին անգամ: Դեռ անցեալ տարի, երբ այդ շրջանի բոլոր խորհուրդները միաձայն որոշու՞մ էին կուչացրել միանալու Հայաստանին, վրացական իշխանութիւնը վարչական եղանակով ցրեց խորհուրդները: և նոր վրացի պաշտօնեաներ նշանակեց: Այդ էլ անշուշտ կատարեց յանուն ազգերի ինքնորոշման իրաւունքի: Եւ նոյնիսկ մեկուսարեցին Ախալքալաքի հայ կոմունիստ գործիչները՝ որպէս դաշնակցական մտայնութիւն ունեցողներ: Հայաստանի աշխատանքութեան և նրա հայրենիքի պաշտպանի տիտղոսն ունեցող Հ. Կոմունիստական կուսակցութիւնը կուչ ատեց այդ բոլորը, որպէսզի ապացուցանի թէ ինքը գտարիւն կոմունիստական է և ուսուց ատելի ուսու: Ձէ՛ որ ուսուների համար այս հանրապետութիւնները ֆիկտիւ բաներ են: Դրա համար էլ երանք դեռ շարունակու՞մ են այս հոգանսները կոչել նախկին նահանգների աւսու՞մով. — օրինակ՝ Երեւանի նահանգ, Նախիջուանի գաւառ. Թիֆլիզի նահանգ, Դիլիջանի գաւառ ևն:

Անդրկովկասեան նոտաշրջանի առթիւ անշուշտ խորհրդային ճամուլը ճոռացաւ զանազան շրջանների մարդկանց կողմից ողջունի խօսքեր հազարբելու. դրանցից մէկն է և Մասունի ներկայացուցչին վերագրու՞մ խօսքերը, որ ամենամաքձօթ կերպով արտաւարել է այդ ճամուլի հաշտութեան մէջ:

Ես այժմ տալիս եմ ընթերցողին Սասունցու խօսքը, որի վերջաւորութիւնը դժբախտաբար ընդհատուեց Մառաշէնի և Եազդեղեանի «օրիկի» բառակոնի և, լռիք» բացակայութեամբ: «Ընկնիներ, մենք երկար տարիներ հոլի ենք մղել սուլթանների և փաշաների դէմ: Այդ կուրը մեր վրայ շատ թանկ է նստար, եթէ այսօր մի տի սասունցիներ ազատուել են և կան, այդ շնորհիւ մեր իրաւորական պայքարին է: Բայց դժբախտաբար այն՝ ինչ կատարուած է մեզ ծոմ արդէն յիշեցնում է Հա Վրական օրերը: Վեցի վեր կացող կոմսսոնը կամ կուսակցականը մեզ Հակայեզպիտական և Հաճարում, մինչև երբ Դուք դաշնակներին վատ էք ստուծ, դուք թուրք փաշաներին վատ էք ստուծ, բայց... մեր պաշտանակները...

Սասունցու ողջունից Երվանդի բարձրութեամբ տակ Հուշարամ ժողովուրդը ճիշտն այս լսեց և Մառաշէնի ու Հաճարանների աղմուկը և սպառնալիքները:

Մի զարմանաք այս երկրին «ազատութիւն» տուց մարդիկ, ոչ թէ ճիշտն մեր սահմանների պաշտպանութիւնն են յանձնել առևտրական և առևտրական բանակին, այլ երկրի ներքին պահպանութիւնն անգամ կատարում են ուսանելով: Ոչ ճիշտն քաղաքական յանցարարների այլ անձնափոքը քրէական յանցանքով բռնած բանտարկեալների պահպանութիւնը, նոյնիսկ դատարան և դատարանից բանտ տանելը վտանգուած է առևտրական և իր թողուն անշուշտ ապագոյց է, որ Հայ աշխատաւորութիւնը Հայ կոմունիստների Հետն է. չէ՞ որ «Հինգ տարւայ տիրապետութեան փաստ ունին» նրանք արդէն...

ԳՆԱԴԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԼԱՐՅԸ

ԵՐԵՒԱՆ, 20 Մարտ, 1926

Նրէք տարի առաջ էր, որ Չիչերինը Հայ փախստականութեան Հարցի լուծման Համար առաջարկ արեց գաղթականութիւնը փոխադրել Ռուսաստան ինչ խօսք, որ Հայ ժողովուրդը այդ մաքի Հետ չհաշուուեց: Իսկ այժմ Հայ կոմունիստները ևս դուժմ են գաղթականութեան Հարցը լուծել յիշում և ճիշտ համաձայն Չիչերինի առաջարկի: Նրանք նազ ու թողով ընդունում են արտասահմանեան գաղթականութիւնը իբր թէ: Կայտասանում տեղափոխու Համար, բայց փաստորէն այնպիսի կայութիւն են ստեղծում, որ կարծիր գծից ներս ընկած գաղթականութիւնը ցրվ լայնատարած Ռուսաստանի ներսերը:

Սուստասանից եկած 4000ի չափ գաղթականութիւնից Ֆիացի են միայն 1000ի չափ՝ լցւած Կազախստանի կիզող անապատը: Մնացածները Հաւելցին ու գնացին թերեւս անվերապանախօրէն: Կյոք բոլորը Հայ լուձեկիներին Համար նշանակութիւն չունի. նրանց Համար միևնույն է գաղթական Հայը Հայաստանում կանգ կուսել Սախալինում թէ կանգնակալում, միայն թէ կարողից գծից ներս լինի:

Չիչերի թուրքերի ներդրելի և ուժեղացելը Միայն 1925 թին Կարապետից գաւառում թրքական 10 դուր է վերահաստատուել: Երևան քաղաքը նոյն թին 300 սուս թուրք են վերադարձել և վերականգնել իրենց սեփականաւորական իրաւունքները: Թուրքերի ներգաղթը դեպի Հայաստան քաջալերուած է ոչ միայն Հայ Համալսնալարների կողմէ, ու ևս ուշադրանքն ու առձիակակ կատարուել են ունց

կողմից: Հինգ տարուց իվեր, Վանի շրջանում Հաստատուած թուրք գաղթականներից շատերը տանիկ կառավարութեան նիւթական և բարոյական աջակցութեամբ վերադարձել են Հայաստան: Իսկ դրա փոխարէն երբեք չէք ստանի, որ մի Հայ ընտանիք փորձի դնալ Նորքէջան կամ Նախիջևանի շրջանը: Ընդհակառակը, Երիշէ կողմից, ինչպէս և Նախիջևանի շրջանից դու Հայերը գաղթում են մեզ ծոմ Հայաստանի թքի տակ, նախիջևանի բազմաթիւ Հայ դիւրեր, որոնցից իւրաքանչիւրի մէջ առաջ Հինգ-վեց հարիւր ընտանիք էին ապրում, Ֆիացի են անալի՝ իսկ նրանց Հայ բնակիչները թարուած են Երևանի փողոցները անհող և անտուն, կամ փառուած են Երևանի փողոցները անհող և անտուն, կամ բաժնեկէց են լինում առաջ այն էլ սակաւահող գիւղացիութեան կէջ: Ինչպէս իրաւակալը որդարացի է ու իտաղարար, ապա՝ ինչու Հայ ժողովուրդը ազատ շունչ չի կարող առնել «սոցիալիստական» Երբեքստում և Նախիջևանում: Ինչու վտահալութիւն չեն ներշնչում նրան իր հող ու ջրին վերադառնալու: Կարծում ենք մեկնութիւնները աւելորդ են: Ընթերցողը լաւ է Հասկանում Հայ Համայնագրանների քողաքական ասիկարութիւնը:

Միշտ կարելի է տեսնել խորհրդային մամուլի մէջ ուռուցիկ յայտարարութիւններ ներգաղթողների քանակի և ժողովրդի աճման մասին: Նրանց հաշուով ազգաբնակչութեան աճումը Համում է 4 աւ հարիւր. բայց այն Կազուձը որ կատարուած է արտագաղթի ճանապարհով՝ ոչ տեսնել կարող են և ոչ էլ ուզում են տրմանագրեր: Միայն 1924—25 թին Հայաստանից դեպի միջին Միւրի ու Թուրքեստան գաղթել ծոմ 50 Հազար ժողովուրդ, որոնց 80 տոկոսը նորից արեւմտահայ յակտեանական գաղթականներն են: Վանի կենտրոնակ ու ստեղծող ժողովրդից շատ քչերն են Ֆիացի: Մեր լաւագոյն արհեստաւորները այժմ Թիֆլիսի, Ռոստովի, Խարկովի և Օդեսայի գաղթի են: Հայաստանում նրանք որպէս անբարեյայունքն այնքան Հայածեցին, որ չկարողացան Հայ կոմունիստների ստեղծած «գրասիր» վայելել: Գնում են անվերջ, շարուն-շարուն և առանց գիտելու թէ ո՛ւր: Եւ երբ մտածում են, որ այդ բոլորը կատարուած է նրանց ձեռքով, սրտեք յեղափոխութեան և աշխատաւորութեան շահի պաշտպանութիւնն իրենց մենտոնը: Կարճած ոչ մի միջոցի առջև կանգ չեն առնում իրենց տիրակալութիւնը յարստեղու՝ արդարացի զայլոյթով եւ ինչու:

Ճիշտ է մեք կողմնակիցներ ենք ներգաղթի. մենք ուզում ենք որ Հայ տարագրութիւնը արտասահմանից փոխադրվ Հայաստան: Բայց երբէք չենք ուզում, որ մեր գաղթականներին բուձեկիները Հասարդոնն քաղաքական կամ կուսակցական նպատակներով: Արտասահմանում արտասահմանիցն ցուց տու. Հայութեան ոչքին թող փեղ, իսկ չլինական պարպից ներս սպրում գաղթականներին փոխանակ Հայաստան բնակեցնելու դին այնպիսի դրութեան մէջ, որ նրանք ցրեն լայնատարած Ռուսաստանում — սա Հաւասար է ազգային ուժեղագործութեան: Եթէ արտասահմանի Հայութիւնը 1923ին Չիչերինի արած Հիւրարիւրութիւնը մերկեց այժմ, նա պէտք է աւելի զրոյշ լինի՝ Ռուսիստե այսօրու են մեր վարիչները: Չիչերինի ակտի ստոր են իրենց քողաքական Հաշիւների մէջ: Նայ ժողովրդի կենսական շահիցը սրանք վաղուց են զահարել խորհրդային—Համայնական քաղաքականութեան:

բային բոլշևիկները ձայն բարձրացրին զիւրացիութեան սուկաւահողութեան ձափն և այդ ստիկանները բարձրան սահմանային խնդրին՝ Արտաքէս Կարինանը զուրա եկաւ Հեռեւեալ յատարարութեամբ. — «Կերթըր, մեր կուսակցական ծրարն խաւերում, չարագանջ վառանդուր ձառնութիւն և առաջ եկել: Ենդ ազգայնական տրադիցիաները ոսակներն պահելու են: Եւ մեր ընկերները ա՛յն Հաւատքն են սնուցանում, թէ խորհրդային իշխանութիւնը մերտահմանները պիտի ընդարձակի ի Հաշիւ Ցաճկաստանի և Եսիթիւնանի: Յայտնում են, որ ոչ մի կոմունիստ, ճանաւանդ գիտակից կոմունիստ այլպիսի մտայնութիւն ունենալ չի կարող. մեր բոլոր ընկերները պէտք է լաւ գիտենան, որ Կարին զաշնագրութիւնը մեր արեւելեան քաղաքականութեան Հիմնաքարն է: Երանիք անգիր խախտել նշանակում է, մեր արեւելեան քաղաքականութիւնը փլուզման ենթարկելը»:

Երբ Կարինանը «ձեր» քաղաքականութիւն է ստուծ, չպիտի կարծել, որ նա Հայաստանը և Հայ ժողովուրդին է Հասկանում: Չէ՛ որ նա բաւական «ձեծ մարդ» է Հայաստանից Տաւրոս Համար Երան «ձեր»ը ձեծ Ռուսաստանն է Այդ կէտում, շիտակ որ, ձեծ Ռուսաստանի Համար Կարին զաշնագրութիւնը կարելի է Համարել արեւելեան, աւելի ճիշտը մուսուլմանական քաղաքականութեան Հիմնաքարն Որ այդ զաշնագրութիւնը Հայ ցողովրդի գերեզմանն է Հանդիսանում — դա չէ մտահոգում Կարինեաններին:

Այս չափով են Կարինեանները Հասկանում Հայ ժողովրդի կենսական ջահերը: Եւ դեռ միամտութիւն կան, որոնք Հաւատում են, թէ որանք այլ մարդերում չորից Հայ ժողովրդի դոյութեան և ապահովութեան ձափն են աշխատում. . .

== Է ==

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԼՈՒՍԻՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆ, 9 Ապրիլի 1926 թ.

Երեք ամիսէ, որ հայ ժողովուրդը խեղճում է Չեկայի կոշմարի տակ: Երեք ամիս է, ինչ կատարել են մասսայական ձեռքբաղութիւններ և դեռ շարունակուում են կատարել: Երեք ամիսէ, որ հարիւրաւոր մարդիկ պահում են Չեկայի ներքնայնորիներում, որոնք ոչ տեսնել կարելի է և ոչ իմանալ, թէ՛ արդեօք ինչո՞ւ համար են բռնաւոր: Երեք ամիս է, որ բանտարկեալների հարիւրաւոր ընտանիքներ ժամը 4-6 Չեկայի դռանը հերթի են կանգնում՝ մի քիչ կերակուր իրենց սիրելիներին հասցնելու համար: Երեք ամիս է, որ խորհրդային մամուլը անվերջ սուտ լուրեր է տալիս Եւրոպայի գանազան բանտերում յայտնաբերւած կարգի բռնների մասին և այնտեղ տանջւող կոմունիստների մասին: Երեք ամիս է նաև, որ նա անապատաշար Զաքարիայի պապանձումն է պահում հայ բոլշևիկներէ ձեռքով կատարուած խժժութիւնների մասին:

Այսօր Երևանի Չեկայի խոնար ու մութ նկունքներում, երկար մնալուց մահամեծծ յիճակի մէջ են տառը հողի հայ ժողովրդի հարազատ դաւաններից, որոնք աւելի սրտազաւ բարեկամ են հայ աշխատատուութեան քան ներկայ տիրողները. — տիրողներ՝ որոնք օտարների հետ դասակարգեցին և օտարների հետ եկան իշխելու այս երկրին և հայ ժողովրդին:

Մեզ համար զարմանալի չէ խորհրդային իշխանութեան լուսթիւնը և ոչ էլ այն անասութիւնը հերքումը

բանտարկութիւնների մասին, որ յաճախ կրկնում է Փարիզի բոլշևիկեան թերթում: Հայ ժողովրդին վաղուց է յայտնի, որ կոմունիստները միանգամ ընդմիջում թքել են ամեն ստեակ բարոյականութեան և սրբութիւնների վրայ. . .

Հայ աշխատատուութիւնը լաւ գիտէ որ կոմունիզմի ազնիւ խօսքը կազմում են սուտը, խաբեբայութիւնը, կեղծիքը և ինտրիգան: Միայն այս «դրախտ» չլալուց միամտները կարող են խաբել նրանց ուռուցիկ և շարուն լուրենգներին, որոնցից իրականի մէջ նրանք վաղուց են երես դարձրել. . .

Եթէ այսպէս չլինէր՝ Երևան Զուբարները, որոնք արտակարգ յանձնարարութեամբ արտասահման են մեկնել կարճ ժամանակով մէջ լիկվիդացիայի ենթարկելու բոլոր ընդդիմադիր հոսանքները՝ քաշութիւն և ազնութիւն պիտի ունենային խոստովանելու իրենց արածները. բայց ի՞նչ սահն, երբ ասելիք չուներ: Եթէ խոստովանեն, որ Հայաստանում ձեռքբաղութիւններ են կատարել, պիտի առնն նաև պատճառները, իսկ այդ պատճառներին այնքան անմիտ են, որ Չեկան անդամ, որ այդ ձեռքբաղութիւններին ձեռնարկել է միայն իր զուրկութեան անհրաժեշտութիւնն ապահովելու համար, այսօր մահանել է ծիծաղելի դրութեան: Եւ ձեռքբաղութիւններից վերջը ուզում է սղործ՝ ստեղծել: Ամեն օր նոր նոր մեքենայութիւններ են շարունակում հրապարակ, բայց չէ յաշնագրում անհայտագիտական խոշոր գործ սարքել:

Չեկայի ձեռքի տակ ունեցած մեղադրական փաստերը կազմում են մի քանի մասնութիւններ, մի երկու լրտեսների տեղեկութիւններ, իսկ ամենազլխատուրը, որ ձեռքբաղութեանը մի երկուսի մօտ կարծում դառն են՝ չայրենիք՝ ամառայից մի քանի օրինակ. . .

15 մարդիկ ձեռքբաղուել են միայն նրա համար, որ նրանք արտասահմանի թերթ են կարգացրել: Կե՛րք զաղութի հայ աշխատատուութիւն, այսպիսի է խորհրդային երկրի ազատութիւնը: Դեռ անցեալ տարի, երկու երիտասարդների մօտ «Հայրենիք»ի երկու օրինակ դռնելով՝ հինգ տարւայ աքսորի դատապարտեցին: Արդեօք արտասահմանում «Ռոտրդային Հայաստան» կարող էր կեանքին էլ պանազ սպառնում է, եւ չէմ կարծում. բայց այստեղ ուզում են ժողովուրդին համոզել, որ խօսքի իսկական ազատութիւն միայն խորհրդային երկրում կայ:

Հակառակ երկրի մէջ շարունակ պահող լուրթեան հակառակ արտասահմանում կատարուած հերքումին, այժմ փաստն այն է, որ Հայաստանի Չեկան քաղաքական հողի վրայ ձեռքբաղել է Հայաստանի հողի վրայ մի քանի հարիւր մարդ: Դրա վրայ անելացրէք Յիֆիլի բանտարկեալները, որոնք մի մասին փոխարդէլ են Երևան, զրա վրայ աւելացրէք ղեկտեմբերի սկիզբներին կատարուած մի խումբ հայ յերի և թիւրքերի ձեռքբաղութիւնները, ինչպէս նաև Հայաշահութեան և սքառանդութեան անուան տակ եղած բանտարկութիւնները:

Գիտենք, տեսնում ենք, թէ ինչպէս հայ աշխատուորը Երևանի փողոցներում Փարիզի «Երևան»ը կարգում է և թքում նրա լղիղը ստախոսութեան վրայ: Դեռ այդ թերթումը անուններն էլ է պահանջում բանտարկեալների. . .

Ողորմելի ին՛եր, անուններ՛Է փոխանակ ձեր ընդի-

մադիրներին պահանջելու՝ պահանջէք Ձեկայից, ձեր Ձեկայի պատասխանատու քարտուղար Աշոտ Յովհանէսեանից — ներողութիւն քարտուղար անւանելու պիտի ստէի Նրանի գեներալ գուրեհրատոր Եթէ նրանք անգամ, քրտաթոր պրոյետար Չուբար, ձեզ չեն բաւարարում, պրպտեցէք ձեր ձեռքի տակ գտնուած արխիւը. և անպայման կը գտնէք այն հաշւատման ցուցակը, որի կազմող յանձնախմբի կարկառուն անդամներին մէջը գուք էք եղել: Այնտեղ դուք կը գտնէք հազար երկու հարիւր մարդու անուն, որոնց դուք համարել եք վտանգաւոր և ծրարելի ամեն քաղաքապան ձախողանքի դէպքում կու՞տ ու կու՞տ կտարել նրանց զլիւն:

Այժմ ի հանգստութիւն ձեզ յայտնում եմ, որ ձեր բակալաւաններից շատերը ձեր ցուցակին մէջ գտնուողներից են:

Քաջութիւն կունենա՞ք, այժմ էլ պնդելու, թէ սուտ են ձերբակալութիւնների լուրերը:

Հ.

ԱՆԱՄԱՅ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Երևան, 1926 մայիս 4

Երկար ամիսների խորհրդաւոր լուծիւնից և ուրացումներից լեռոյ, իշխանութիւնը վերջապէս խոստովանեց որ, այժ, Հայաստանում ձերբակալութիւններ են կատարելու Քանի դեռ պրովոկացիոն մեղադրականը չէր կաղմած բանտարկութեանց մասին արտասահման հասած լուրերը հերքում էին իրենց որսի թիրերով և այդ լուրերը յայտարարում թափրիզում թիւած «գաշնակցական պրովակացիա» Դժբաղտաբար այս երկրի տիրոջներ նորից քաջութիւն չունեցան բանտարկեալների խակական թիւը խոստովանելու: Ըստ իրենց ասածի 70 հոգի են: Երեւի խօսքը միայն նրանց մասին է, որոնք Ձեկան այս պէս կամ այնպէս մի պոչ է փակցնում: Նրանք շարունակում են ուրանալ ձերբակալութիւնը այն մի քանի հարիւր մարդկանց, որոնց համար մեղադրանքի ոչ մի նիւթ չկայ:

Մեղադրական յայտարարութեան մէջ աւքի է գարնում 40 թուրք մուսալաթականների ձերբակալութիւնները. պիտի սասել, որ թիրքերի դէմ ամբաստանութիւնն այն չէ, ինչ անամթաքար յայտնում են թուրքերը ձերբակալել են որպէս Մուսալաթա Քէ մայի կատակարութեան գործակալներ: Անցեալ աշնան թիւրք կոնսիւլը որպէս այդ պնդողութեան կազմակերպող հեռացել և նրան նորը փոխարինելու: Բայց բոլրէնէլ քաղաքագէտների համար անհրաժեշտ են այդ բոլորը և նոյն իսկ միպպետական հայ Լուկասովի Փաշիզովը կատարած սխրագործութիւնը համարել մեղադրական փաստ այն հայ մուսալաթականների դէմ, որոնք իրենց պէս չեն մտածում:

Թէ՛ն նախնական շրջանում Ձեկան ուզում էր համոզել իշխանութեան, որ ինքը մի խոշոր սպասամբութիւն է կանխել, բայց փաստերը եկան համոզելու անգամ իրենց կուսակցական մասսային, որ այդ բոլորը Ձեկան ինքն է հնարել, իր գոյութիւնը արգարացնելու համար:

Բոլոր այն կուսակցականները, որոնք տիրող

կլիկից հեռուն են, այդպէս են տրամաբանում, և դա բացաւայտ ճշմարտութիւն է:

Ձեկան ուզեցել է զանազան ազեֆների միջոցով «տերրոր խաղալ»: Այդ հոսն է բուրում ներկույս կրմնանանցների և Քիւրդ Դազունների հանդէպ անբարեւոյտ արդիւններից: Այժմ էլ նա նոյն ազեֆներով շարունակում է շրջաններում զաշնակցական խմբակներ կազմել: Ըստ երեւթիւնի Կ. Կ. Կ. և իր Ձեկան չեն մտածում որ այդ բոլորը մի օր շատ թանկ է նստելու իրենց: Հայ ժողովուրդը լի հաւատով սպասում է այդ օրան: Նա համոզւած է, որ ինչքան բոլշեփեկեան տերրորը ուժեղանայ, ինչքան բանտարկութիւնները և հալանահանքեր շատանան, այնքան էլ պիտի արագանայ այս ողբերգութեան վախճանը:

Երբ լեռը երկնելուց յետոյ մտկ ծնեց՝ տխրահոյակ Մելիք Յովսէփովը այժմ սկսել է ուրիշ միջոցների դիմել: Նա կարգադրել է, որ բանտարկեալներին հաց տանող ընտանիքներին մի երկու ժամ պահեն և սպառնալով ինչ որ եղած ու չեղած զաղանքներ կորզեն: Հարցնում են թէ ինչի՞մ են ապրում, ումի՞ց են փող ստանում են: Եստ անգամ հեգնում են. թէ Դաշնակցութիւնը շատ հարուստ է, դուք սպասով եք: Պատահում է նաև, որ երբ բանտարկեալներին թերթ է տանում, չեն ընդունում, ասելով թէ բանտարկեալը արտասահմանեան թերթ է պահանջում. «Հայրենիք» Վրոշակի են:

Մելիք Յովսէփովը վերջերս կորցրել է իրեն: Դրսում շշուկներ են շրջում, թէ նա անանուն սպառնական նամակներ է ստացել, և այդ այնքան է նրան պանիկայի ենթարկել, որ նա պատահողին ասում է — «Գնացէք ասէք, որ եթէ իմ կամ մի ծառայողների դէմ մի քեյալ արւի՞» 500 հոգի եմ զնդակահարելու: Որտեղի՞ց են բղխել այդ նամակները. դժւար թէ քաղաքական և նոյնիսկ անխզալ կուսակցութիւն անանուն նամակ գրի: Դրողը կամ իր ձեռքից դադած մի թոյլ մարդ է, կամ իր ճարտիկ լրտեսներից մէկը, որպէսզի Ձեկայի շեֆը անբարեկողմների ուրականներից սարսափած առաջ քաշի գաղտնի լրտեսներին, որոնք տղուկի նման քամում են այս երկրի և ժողովրդի հիւզով:

Հայ ժողովրդի քաղաքական ձգտումները, այսպիսի տերրորներով չկարողացան փոխել ոչ սուլթանները և ոչ էլ ցարերը, որոնց հետ վաթազութեան մրցում է կատարում Ձեկան: Ուր մնաց այս ողորմելի արարածները, որոնք յանդուգն են միայն անզեն հակառակորդի գէմ:

Ձեկայի առանձնասենեակներում պահողներին Երբեմն այցի են գնում կուսակցական շեֆերը, անշուշտ բոլորն էլ խոստումներով գինւած, խոստովանութիւններ կորզելու համար: Դրանք թոււն է արարալազատութեան՝ կոմիսարը Այդ կոմիսարը էլ այցելում միայն ցեմնտից ձուլւած այն կարցերները որոնց մէջ զրոյղը ոչ կանգնել կարող է, ոչ նստել և ոչ պահել: . .

Այսպէս է յեղափոխական իշխանութեան արդարադատութիւնը, այսպէս են ստեղծում իրենց աշխատատրական՝ պետութիւնը համաշխարհային յեղափոխութեան «համոզում» առաքեալները: . .

ՀՆՆԻ

ՄԵՐ յԻՆՔԻՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

... Գիտեց անշուշտ, որ խորհրդային սահմանադրութեան մէջ կայ մի կէտ, ըստ որի ամէն ազգ իրաւունք ունի ինքնորոշուելու: Համաձայն այդ կէտի նախկին Ռուսաստանի սարսուղութեան վրայ երևան եկան այնպէս «Հանրագիտութիւններ», որոնց անունն անգամ առաջ լսած չէիք: Եւ ահա մենք Ռոստոլ Նախիջևանի Հայիրս էլ ուզիցէք կազմել մեր «Հանրագիտութիւնը»: Ինչու չէ, մենք ուսնից պտկաս ենք որ... Այս գործի նախաձեռնութիւնը պատկանում է մեր շքանուն ունեւ գործիչ Համբաւ վայելող Թեոդորոս Զորարիի:

Զորարի ջանքերի շնորհիւ «Նացմէնը» (ազգային փոքրամասնութեանց վարչութիւնը) որոշեց կազմել Հայկական ինքնավար շքան, որի մէջ մտնելու են Նիսիճիս, Մեծ-Սալա, Փոքր-Սալա, Թոփիթի ու Ջալիլ գիւղերը և Սուրբ Խաչ աւանը, որը այժմ կոչուած է Միասնիկո՞վ: Անեց ինքնավարութիւն որ ասուած են, գեիցերական կանտոն չլիտի Հասկանաց. բոլոր այդ գիւղերը կազմուած են վարչական մի միութիւն, որի ներքին գործավարութիւնը կառարարելու է Հայերէն լեզուով: Նյայնքը միայն, Փաստօրէն առաջ էլ նոյնն էր, միայն թէ մենք «ինքնավար» չէիք: Դուրս է գալիս, որ, Մայիլերի Հերոսի անուն, միշտ էլ «ինքնավար» էնք եղիլ, բայց չնից լինացել, և միայն բոլշևիկները բացին մեր աչքերը Հայկական կեանքը մեզ մօտ մեռած է. ո՛չ Հասաքոյի կայ, ո՛չ ազգային որ և է ձեռնարկ, ո՛չ կենդանութիւն: Անէն ոք չարչարուած է մի կտու: Հայի Համար և զուխը կախ՝ ո՛չ մի բանի մասին չի ուզում մտածել: Ասեց ուզեցէն էլ, չի կարող իսկոյն զլիւն կանու Միայն կոմունիստներն են անպա ժողովներ անելու և խօսելու: Այստեղ լոյս ասես «Մօսք՝ ու Մամուղ» անունով մի թերթ. մէջի յօդուածները իսկապէս մուրձով ու մանգալով են գրուած: Ինչո՞ւ են և զգրացական գործերը — ուրեմա նշեալի փառաւոր օրերը Նախիջևանում կայ մի Հայկական զարոց: Մի զարոց էլ կայ Ռուստովու: Երկուսն էլ ուսման ծրագրի և ուսուցչական կազմի տեսակէտից շատ որորմելի են՝): Անունով միջնակարգ են, քայց աւարտող շտաները նոյն իսկ տարրական ուղղութեամբ են շղիտեն...:

Կիանքը այստեղ չափազանց թանկ է: Մասնաւոր գործերը (թէ առևտուր և թէ արհեստներ) այնքա՞ն ճ՛նշուած են կառավարութեան կողմից, որ մեռնելու վրայ են և չարիքը անսելի կերպով բարձր են, այնպէս, որ մարդիկ այլևս Հնարաւորութիւն չունին այլևս մարտնչակիւր իրենց գործերը և վերջացնում են մէկը ծրար լեռակից: Կոմունիստները դիմաժող մանր տուրքեր են դնում, որ մասնաւոր առևտուրն ու արդիւնաբերութիւնը մեռնին և նրանց տանը բանն պտտական աշխատեցրութիւնն ու կողպերացիան: Ուրքան էլ Համակրելի լինի այս միտքը, իրականութեան մէջ

նա չի յաջողում և չի արգարացնում իր վրայ գրած յոյսերը: Նրանց մէջ չափից աւելի զարգացած են գոտութիւնները, գիգուսներն ու կաշուաւորութիւնը: Մէկին զուր են Հանում կամ բանասերուած են, նրա տեղը եկողը է շնորհակալութեամբ զուգութիւնները և գտտի տակ ընկնում: Ո՛չ մի գտտ ու պտտիմ չի օգնում. վերքը շատ է խոր: Եւս իսկապէս, ուրիշ ինչպէ՞ս կարող է լինել: պաշտօնեաների վարձարութիւնը խիստ աննշան է, ապրիլն անՀնար է, և ճարդիկ ընկնում են փորձութեան մէջ, մտնաւանց որ Հսկող աչքն էլ թույլ է: Կոպերատիւներն և գործարաններն մէջ վարիչ պաշտօն ունեցող կոմունիստները աւելի պրոպագանդով են զբաղւած, քան զօրծով: Ի՛նչ գործ կարող է լինել այսպիսի պայմաններում:

Այն էլ պէտք է ասել, որ գեղմուսներն ու վասնումներն չարիքը Համասարած է ամբողջ Ռուսաստանում, աւելի ճիշտ, ամբողջ Թորհրդային Միութեան մէջ: Թորհրդային թիւթերը ստրափելի մերկացումներ են տնում, բայց այդ բոլորը գեա եղածի աննշան մտան է: Ձերմիսակին էլ գուսնօրէն գանգատեց գեղմուսներն մտաին: Համաձայնութեան «Սոխարիտողներ» նախագահների խորհրդակցութեան միջոցին արտասանած իր ճառում նա, ի միջի այլոց, յայտնեց, որ «կոպերատիւներն միութեան Համագումարում պարզեց է, որ 2000 կոպերատիւների մէջ, որոնց Միութեան գրուած զուգութեամբ տնում է 3.4 միլիոն ուսուլի, 1.8 միլիոն սուրբ վասնում օւ զեղծուած է կատարելու: Նոյն ճառում Աէկաչի ստեղծողն ու զեղծողը յայտարարեց, որ «սմէն կարգի կոպերատիւներն վարիչ ու վերաւստողիչ մտրմիներն անգամներն թիւր Հասնում է 400,000 մի Հակայական բանակ որի պահպանութեան վրայ ծախսուած է աւելի, քան 50 միլիոն ռուբլի»: Հասկանալի է, որ Հետեանք լինում է անտահճան չտփերի Հասած բիրտրաբակից և ժողովրդային Հարստութեան շուսլում: Զարմանալի չէ և Ձերմիսակի գանգատը, թէ խորհրդային «արդիւնաբերութիւնն ու կողպերացիան դարձել են չեմոփիկական»:

Այստեղ ամէնքը անհամբեր ոպասում են, թէ երբ Եւրոպան պէտք է ճանաչի մեզ և մի խաշոր փոխուտութեամբ օգնութեան Հասնի: Առանց այդպիսի օգնութեան մենք կորած ենք: Վերջերս չէրմիսակին էլ սկսել է ընկնել, այնքա՞ն, որ սուրբ գանիլը շուկայում գործել է շատ զօտար: Միջոցաւ առաջ ինչքան աւելիք, կարող էր ծարիւլ: Եւս պիտի ստրափելի մաքս են պահանջում, որ արտասահմանից իրի ստանալու ո՛չ մի Հնարաւորութիւն չկայ: Ծտտերն արտասահմանում ունեն ազգակներն ու բարեկամներ, որոնցից պարբերաբար ստանում են իրեր, զիւտօրապէս Հագուտ ու ոտնաման: Մաքսի վերջին բարձրացումով այդ այլևս դառնում անմատչելի:

Կոմունիստները վերջին սմիսներս շատ ջղային են դարձել: 14-րդ Համագումարը, իրօք, նրանց շարքերում առաջ է բերել պառակտում: Անաստաս Միկոյնանը, որ Հիւսիսային Կովկասի կողմից պատգամուտ էր այդ Համագումարում և Անուպիւլի դէմ բուռն արատաւարուներին մէկը, վերադարձաւ շատ դառնացած և կուսակցական նեղ շքաններում յայտնեց, որ կոմունիստական կուսակցութեան միութեան խանգարումը վատ է և թէ և Համագումարում բուսու-

*) Բոլշևիկից առաջ Նախիջևանում կար թեմական զարոց, Փագոյան օրիորդաց դիմապիտ, ձերմիսակին օրիորդաց վաճառան, արհեստաւորաց զարոց, Համբարձման ու Թորոտան մի. զպրոցները, երկու օրբանոց զարոց, մանկապարտէլ — բոլորն էլ զուս Հայիական: Այժմ այդ զարոցները փակւած են և շեխերը գրոււած:

էլ է ընդդէմադիրներին լուծցնել, բայց կհանքում Հակոա-
կոսիները Քուռ է և նոյն խոյ ուժ գտնուած Ձիւնոյիէլի
կոյճն օկիցնիրը ըստ երևոյթիւն, Համակիրպուած են, բայց
սերկոյճու շարտակուած են ներքին աշխատանքները:

Այդ փաստը Հաստատուած են և ձերբակալութիւնները
ճեղ ճօտ — Ռատուոյի և Գործարի աճխահամբերուած Կեն-
տրոնից եկած Հրամանի վրայ բանտարկեցին ճի բանի Հորիւր
բանարներ՝ ճեճ ճառը կանուխտտ, որոնք աճապարանքով
օղորդեցին զԿար Հիւսիս Այդ բանի վրայ բուն սրտիկները
չօր պահաց զըրուցն, ճի բանի աղ նոյն խոյ գործադուներ
երան, շարժուած գտնուած էր սպունական, բայց «Գէպէ-
սին» յաջողցից խեղճել ու լւծցնելի ժողովրդի ճէջ Հազար
ու ճի պատմութիւններ են արուած և աճէն օր ճամնատուց
աշխիւրից սասցւած լուրեր են Հազարուած: Մի օր ստուճ
են, թէ Մտուելուճ յեղափոխութիւն է պատահել և զբա-
Համար ճեղ ճօտ խիտ ճիշտեցնել են գործարարու: Միւս օր՝
թէ Անգլիոն ճեր զէճ պատարազն է յայտարարել: Ուրիշ օր՝
թէ Փրանսիոն ու Ամ րիկան ճեղ ճի բանի ճիլխարջ փոխա-
ուութիւն են արել: . . . Ուր է ճիշտը, օ՛ր է ստուը
զիւր է Հաստատու: Աճէնից աւելի կոճոնիտանկը Գիսի-
նուճ են պատերազմից. ճէլ՝ որ կարճիր բանակի գործերը
չստ էլ փայլուն չեն, ճիւս կողմից՝ վախճուած են ներքին
ուղտոճուութիւններով: Ընկ ախտակիւ, պատերազմի
լուրերը ժողովրդի կողմից ընդունուած են առան-
ճին Համակիրներով: Կրուցն թող Սեմուրի զայ (Գործանիւն),
ճիւսն թէ սա բոլշէիկ խռանէն (ժանտախտ) ազատենք» —
այս է ճեր նախիշխանցի զիւզացիների փափագը: Բայց
«խռանը» շարտուակուած է իշխել և իսկի արամադրութիւն
ցոյց չի տուիս Հեռանալու: . . .

Մըբ պիտի գայ վերջը ճեր նաՀաստակութեան,
ԹՈՐՈՍ

ԲԱՆՏԱՐԿԵԱՆՆԵՐԻ ՇՈՒՐՔԸ

ԵՐԵՒԱՆ, Մայիսի . . . 1926 *)

Ձերբակալուածների վիճակը ընդհանուր առճամբ շարտ-
նակուած է Քուր անորոշ, Հաս ու կենդ մարդկանց, որոնց
բանկիւր շարտուճի էր ճատնել անգամաճ ենաթթու կոճոնիտա-
ները՝ արճակել են բանտից: Աղեքսանդրապոլի բանտար-
կեաներից ճի բանիկին Յ տարով աքտորի վճիւ են աւել,
բայց աքտուրվալը չունենալու պատճառով գես պահուած են
փականքի տակ: Այստեղից էլ ճի բանի Հոգու 2—5 տարով
աքտորդեցին նոր Բայաղեղ Գրանց թուած էր և ընկ Վ. Քը-
ճոյեանի Հարկը, 74 ամեայ Ռադարան Գրճոցանըր Վերջինս
Մեանայ լճով իր աքտուրվալը փոխադրելիս իրեն զցուած է
լիճը և խեղդուած, Հասարակութեան վրոյթուածը այս ճերու
նու բանտարկութեան և Հինգ տարով աքտորի գատապար-
տելու գէճ սահման չունի:

Ձեկայի կուղներին խնամութեան պատճառով ճի
ք ճի Հոդի բեճատիցն են ստացել, իսկ ուրիշներն էլ
զըրկ և այլ Հիւանդութիւններ:

Բանտարկեաների ճի ճասը, որոնցից շարտերը գես
ճընչն Հիճա քննիչի երես չեն տեսել՝ Հապաղուց են արթը:

*) Բճատիւր տընթեաների է, ԽՄՌ.

պահանջելով իրենց գործի քննութիւնը: Սրանց թուոն են. . .
18 Հոդի էլ գիճուճ են կատարել Գորճարի կոճոնեցն պա-
Հանջելով պարզել իրենց ձերբակալութեան պատճառները
Լուրեր են շըրճուճ, թէ Ձեկան այս քանի օրս պէտք
է Հրապարտուելին դատ կաղճակելու սերբորի գորճով ճե.
զաղըտըներ զէճ: Երան Հասկըրել են, թէ վերջապէս անյարճար
է ստակ փոսով ճը քանի Հարիւր մարդկանց բաղը տնօրի-
ները. «պէտք է Հասարակութեանը ճի բան ցոյց տալ»:
Սրա Համար պատրաստութիւններ են տեսնուճ, այսինքն
վիաներ են պատրաստուճ, որ այսինչը այնինչին արըճա-
նակ է աւել, որ այս ճէկը այն ճիւսին աէրբորի Հրահան-
նակ է աւել կայնը, որ այս բոլորը կատարուճ է այնքան վրան
բաց յիճարթեճմար, որ աէրբորիտական գործերից որ և է
Հասկացողութիւն ունեցող մարդկանց ճիճաղը ճիւսն կարող
է շարթել: . . .

Ձերբակալուածների ճի ճասին ստիպուած լինելով ար-
ճակել, որովՀետև ոչ ճի կերպ չի յաջողուճ երանց զէճ որ
և է մեղադրական սարթել՝ Ձեկան ճատուճ է իր սիրա
գործութիւնը արթեցնել զէթ երանցից Հակադաշնակցական
յայտարարութիւններ կըրթելով Այս ճաշուճ ճէթողի կիրա-
ման Հեռեանքներից ճէկը պէտք է Համարել «ճոնպէս
գաշնակցական» ՄՀիւրան Ճէր Գրիբորեանին Համապատաս-
խան յայտարարութեան դիճով բանտից արճակելը: Մենք
չզիտենք, թէ աղտեղ, արտասահմանուճ, ի՛նչ տպաւոր-
թիւն են թողնուճ նճան զեկարացիաները — յայտարարու-
թիւնները: Այստեղ մարդիկ նրանց կարգալու յոգնութիւն
իսկ չեն ուղուճ կրել, այնքա՛ն ճանեղացած են այսօրինակ
նճան խեղկատակութիւններից:

Բանտարկեաների և ճանաւանդ նրանց ընտանիքների
նիւթական դրութիւնը ուղղակի տաղեպալի է: Շատերը
իրենց կաթանները, անկողինները և այլ անհրաճեշա իրերն
են ճախուճ բանտարկեաներին կիրալուր Հասցնելու կաճ իրենց
օւ ուղրուճ Հայթոյթելու Համար, ճաննելով այս դուրը
ճնացաների թշուառ վիճակը՝ մարդ սեանայ երանի է տա-
լիս ձերբակալուածներին: . . .

ՄԻՄԵՌԱԿ

Մ Ե Ր Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ղ Ն Ե Ր Ի Ն

Շարժաճըր խանգարելու և տպորանական ճի
շարթ փոփոխութիւնների պատճառով «ԳՐՕՇԱԿ» ի այս
թիկ տպագրութիւնը խիտտ ուշացու: Մեր կողմից
ճիւք են առնուճ բոլոր միջոցները, որպէսզի յետա-
պայ թելերի լոյս տեսնելը արագանայ և Օղտատից
սկսուճ վերջնականապէս կանոնաւորի Դրոշակի Հրա-
տարկութիւնը:

ԳՐՕՇԱԿԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

71 Av. Kléber Paris

Le Gérant: E. BUAT

Imp. TURABIAN 227, Bd. RASPAIL PARIS